«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի պաշտոնակատարի 31.01.2019 թ. թիվ 76 Է/Կ հրամանի

ՎՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մշակող մարմին՝ ՎՊՀ ՈԱԿ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 1 24.01.2019 թ.

Վանաձոր

2019թ.



ՎՊՀ ՈՐԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎՊՀ ՈՐԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐ- 2018

Ձեռնարկ համալսարանի ուսանողների և աշխատակիցների համար

Հեղինակ՝ Ս. Խառատյան, ֆ.մ.գ.թ. դոցենտ
Համահեղինակներ՝ Մ. Շահվերդյան, Ս. Մելքոնյան, Ա. Մանուկյան

ՎՊՀ Որակի քաղաքականություն/ ՈԱԿ.-Վանաձոր; Վանաձորի պետական համալսարան, 2018, էջ 58

ՎՊՀ-ի որակի ապահովման քաղաքականությունը

Բովանդակություն

1)Ներածություն----------4
2)Որակի ապահովման քաղաքականության սկզբունքները----------7
3)ՎՊՀ որակի ապահովման քաղաքականության խնդիրները ----------13
4)Որակի ապահովման քաղաքականության իրականացման մեխանիզմներ և գործիքներ----------15
5)Որակի ապահովման քաղաքականության գնահատման սկզբունքները, մեխանիզմներ և ցուցիչներ ----------20
6)Որակի ապահովման քաղաքականության բարելավման գործողություններ եվ մեխանիզմներ----------26
7) Օգտագործված հասկացությունների և հապավումների բացատրագիր----------30
8)Հավելված ----------32

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որակի ապահովման քաղաքականությունը և նրա իրականացման գործընթացները, հանդիսանալով ԲՈՒՀ-ի որակի ապահովման համակարգի հիմնական առանցքը, պայմաններ են ապահովում որակի մշակույթի զարգացման համար, անընդհատ կատարելագործման շրջափուլով նպաստելով հաստատության զարգացմանը, որտեղ շահագրգիռ կողմերը պատասխանատվություն են կրում որակի ապահովման համար և մասնակցում համապատասխան գործընթացներում բոլոր մակարդակների վրա:

Վանաձորի Պետական Համալսարանի որակի ապահովման և կառավարման քաղաքականությունն իրականացվում է համալսարանի առաքելությանը և ռազմավարական նպատակներին համապատասխան չափանիշների, չափորոշիչների և ընթացակարգերի հիման վրա: Համալսարանը մշակել և ներդրված են որակի ապահովման ռազմավարություն և պլան, որոնք, ինչպես նաև որակի կառավարման ռազմավարությունն ու քաղաքականությունը, ընթացակարգերը ունեն պաշտոնական կարգավիճակ և հասանելի են հանրությանը:

ՎՊՀ Որակի կառավարման և ապահովման քաղաքականությունը ելնում է համալսարանի նպատակների համարժեքությունից հասարակության պահանջներին և ՀՀ կառավարության կողմից հաստատված չափորոշիչներին ու առաջնահերթություններին:

ՀՀ բարձրագույն կրթության ինտեգրումը եվրոպական կրթական համակարգին՝ որակի արտաքին ապահովման չափանիշներին համապատասխան, նպաստում է կրթության որակի բարձրացմանը, գործընթացի վերաբերյալ տեղեկատվական դաշտի ընդլայնմանը, թափանցիկության ապահովմանը, շնորհիվող որակավորումների փոխճանաչմանը: Որակի արտաքին ապահովման ընթացակարգերը ուղղված են որակի ներքին ապահովման գործընթացների արդյունավետության ստուգմանը:

Որակի ներքին ապահովման քաղաքականությունը արտացոլում է համալսարանի առաքելությունն ու որդեգրած արժեքները և սերտորեն կապված է նրա զարգացման հայեցակարգի, ռազմավարության, ռազմավարական պլանի և գործունեության հետ: Որակի ներքին ապահովման քաղաքականությունը սահմանում է որակի պարզ և չափելի խնդիրներ կազմակերպության տարբեր գործառույթների և մակարդակների համար: Գործընթացները արժեքների և տարբեր ծրագրերի, ձերքբերումների վերանայման, վերլուծության և զարգացման հնարավորություն են տալիս: Գործընթացում ներգրավված են դասախոսները, ուսանողները, գործատուները և շահագրգիռ մյուս կողմերը:

Որակի ապահովման քաղաքականությունը տարածվում է համալսարանի գործառույթների և գործողությունների այն բոլոր ասպեկտների վրա, որոնք ազդում են կրթական ծրագրերի չափորոշիչների պահպանման և որակի ապահովման վրա, ինչպես օրինակ, դասավանդումը, հետազոտական աշխատանքները, ուսումնառությանն աջակցող ծառայությունները, կառույցները, կահավորումն ու սարքավորումները, կառավարումը և համագործակցությունը:

ՎՊՀ որակի քաղաքականության նպատակն է՝ սահմանել և համապատասխան ընթացակարգերով իրականացնել բուհի որակի ապահովման գործընթացներն ուղղորդող հիմնարար կանոնների ամբողջությունը:

ՎՊՀ որակի քաղաքականությունն ուղղված է որակի նպատակների իրականացմանը համալսարանի որակի ապահովման սահմանված ոլորտներում: Որոնք են՝

- Ներդնել և շարունակաբար կատարելագործել որակի կառավարման և ապահովման համակարգը բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական տարածքում գործող (ESG), ՀՀ ՈԱԱԿ-ի և Համալսարանի ՈԱԿ-ի կողմից մշակված և ներդրված չափանիշներին ու չափորոշիչներին համապատասխան:
- Ապահովել մեխանիզմներ որակի ապահովման գործընթացներում շահառուների առավելագույն մասնակցության համար՝ որակին միտված թափանցիկ ու հաշվետվողական մշակույթի տարածման նպատակով:
- Մշտադիտարկել համալսարանի կրթական և հետազոտական գործընթացների արդյունավետությունը, որակը՝ ապահովելով ծառայությունների շարունակական բարելավումը:

Համալսարանի ղեկավարությունը, աշխատակազմը, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը որակի կատարելագործման գաղափարի կրողն են և պարտավորված են շահառուների առջև՝ իրականացնելու բարձրորակ կրթական ծրագրեր, որի նպատակով որոշումների կայացման ընթացքում համալսարանը կիրառվում են կարիքների և պահանջների բացահայտման արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելով ներքին և արտաքին շահառուների առավելագույն ներգրավվածություն:

Ուսանողների կողմից ակնկալվող կրթական արդյունքներին հասնելու աստիճանը և կրթական ծրագրերի հետագա բարելավումը քաղաքականության քննարկման հիմնական առարկաներ են:

ՎՊՀ որակի ապահովման քաղաքականությունը սահմանում է համալսարանի սկզբունքային մոտեցումները ՈԱ հիմնահարցերի և նրանց իրագործման ուղիների վերաբերյալ: Քաղաքականության իրականացման գործընթացը պահանջում է որոշակի ընթացակարգային ուղղորդում, որը մի կողմից՝ մանրամասն տեղեկատվություն է ապահովում քաղաքականության իրականացման միջոցների վերաբերյալ, իսկ մյուս կողմից՝ կարգավորում և կոնկրետ գործողությունների վերածում դրանք:

Սակայն, որակի կառավարման ու ապահովման քաղաքականությունը և նրանց արդյունավետության շարունակական բարձրացումը՝ ներքին ու արտաքին մարտահրավերներին համապատասխան, անընդհատ շտկման և կատարելագործման անհրաժեշտություն ունեն:

Զեռնարկում ներկայացված խնդիրները, որոնք առկա են նշված գործընթացներում, և նրանց արդյունավետ լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ երաշխավորությունները հիմք են տալիս հույս հայտնելու, որ այն օգտակար կլինի համալսարանի վարչական համակազմի, ուսումնաօժանդակ աշխատակիցների,

դասախոսների, ուսանողների, և արտաքին շահակիցների համար, ովքեր մշակում և իրականացնում են որակի կառավարման ու ապահովման քաղաքականությունը:

Համալսարանի որակի ապահովման քաղաքականության ուղենիշները, չափորոշիչները, խնդիրները, նրանց լուծման սկզբունքային մոտեցումները և մեխանիզմները ներկայացված են ձեռնարկի առաջին պրակում: Որակի կառավարման, մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, իրականացման, մշտադիտարկման, աուդիտի, ինքնավերլուծության, ստուգման, գնահատման և վերանայման ընթացակարգերը, մեխանիզմները, գործիքակազմը, ինչպես նաև համալսարանի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշները, չափորոշիչները, նպատակները, խնդիրներն ու նախապատրաստական գործընթացները կներկայացվեն հաջորդ պրակներում:

Որակի ապահովման քաղաքականության սկզբունքները

ՎՊՀ որակի կառավարման և ապահովման քաղաքականությունը նպատակ է հետապնդում՝ շարունակաբար բարձրացնելու կառավարման, կազմակերպչական, դաստիարակչական, կրթական, գիտահետազոտական աշխատանքների որակը, արդյունավետությունը, ապահովելով համալսարանի ռազմավարական ծրագրերի իրականացումը, զարգացումը և կատարելագործելով ՈԱ պաշտոնական համակարգը՝ հիմնված գործունեության արդյունքների և կիրառվող գործընթացների ներքին ու արտաքին գնահատումների վրա:

Քաղաքականությունը պաշտոնապես ընդունված է համալսարանի իրավասու մարմինների (Հոգաբարձուների Խորհուրդ, գիտական խորհուրդ) կողմից և միտված է կրթական գործընթացի որակի նախանշված չափանիշների ապահովմանն ու բարելավմանը:

Որակի ապահովման քաղաքականությունը տարածվում է համալսարանի գործունեության բոլոր ոլորտների վրա, որոնք են՝ կառավարում և վարչարարություն, մասնագիտությունների կրթական ծրագրերի (ՄԿԾ) մշակում, ներդրում, իրականացում և զարգացում, ուսումնառություն և դասավանդում, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորում, զարգացում և կատարելագործում, կրթություն և հետազոտություն , ենթակառուցվածքներ և ռեսուրսներ, հասարակական պատասխանատվություն, արտաքին կապեր և միջազգայնացում:

ՎՊՀ որակի քաղաքականությունն ուղղված է համալսարանի շահառուներին (ուսանողներ, դասախոսներ, վարչական աշխատակազմ, շրջանավարտներ, գործատուներ, ձեռնարկություններ, կազմակերպություններ և այլն), և հիմք է հանդիսանում համալսարանի աշխատակիցների աշխատանքային գործունեության և ղեկավարների որոշումների կայացման համար: Որակի քաղաքականության իրականացման համար պատասխանատու է համալսարանի ողջ աշխատակազմը: Համալսարանի ղեկավարությունը պայմաններ է ապահովում է որակի նպատակների իրականացման համար, իսկ ուսանողները և արտաքին շահառուները՝ հետադարձ կապ:

Քաղաքականությունն իրականացվում է բոլոր ընթացիկ ու պլանավորվող ծրագրերի, ուսուցման ձևերի և կրթական աստիճանների նկատմամբ /ըստ որակի ապահովման սահմանված ոլորտների/ համալսարանի որակի ապահովման գործընթացներն ուղղորդող հիմնական կանոնների ամբողջությամբ: Քաղաքականությունը կառուցվում է որակի շարունակական բարձրացման միտումով, նախատեսելով մեխանիզմներ՝ համալսարանի որակի մշակույթի ձևավորման և կայուն զարգացման համար:

Որակի ապահովման քաղաքականությունը պաշտպանում է ուսանողներին ցածրորակ կրթական ծառայություններից ու արդյունքներից և միտված է նրանց կրթության որակի ապահովմանն ու շարունակական բարձրացմանը:

Որակի կառավարման և ապահովման քաղաքականությունը թափանցիկ է և վստահելի: Ներքին և արտաքին շահակիցները, հասարակությունը տեղեկացված են

համալսարանի կրթական և դաստիարակչական գործընթացների ու գնահատումների վերաբերյալ:

Որակի կառավարման վերաբերյալ արդյունավետ որոշումները և եզրակացությունները ընդունվում են փաստական տվյալների ու տեղեկատվության վերլուծության հիման վրա:

Համալսարանը պատասխանատու /հաշվետու/ է հասարակության առջև կրթության որակի ապահովման համար, որն իրականացվում է ծրագրերի և որակավորումների պարբերական գնահատումներով: Որակի գնահատման գործընթացը հիմնված է ինքնագնահատման և արտաքին անկախ փորձաքննության վրա:

Որակի կառավարման և ապահովման գործող՝ PDCA պլանավորում (Plan), կատարում (Do), ստուգում (Check), գործողություն (Act) փուլային մոդելը կիրառվում է պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման (ՊԻԳԲ) գործընթացներով:



Համալսարանի որակի կառավարման և ապահովման քաղաքականության ելակետը համալսարանի առաքելությունը և ռազմավարական նպատակներն են, որոնք իրականացվում են՝ ղեկավարվելով ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման ինստիտուցիոնալ գործընթացների չափորոշված սկզբունքներով.

ա) Համակարգված մոտեցում համալսարանի գործունեության ոլորտներում իրականացվող փոխկապակցված գործընթացների կառավարման, արդիականացման, որակի բարելավման և արդյունավետության բարձրացման նկատմամբ՝ պարբերաբար մշտադիտարկման, աուդիտի, հետադարձ կապի, հաշվետվողականության և ներքին ու արտաքին գնահատումների միջոցով: Բարձրագույն կրթական գործունեության որակի ապահովումը կարևորագույն գործիք է, որը երաշխավորում է հասարակության

պահանջների ու կարիքների բավարարումը: Ուսանողները, շրջանավարտները, գործատուները և հասարակությունը կրթական և գիտական ծառայությունների բարձր որակ են ակնկալում հաստատությունից:

բ) **Համալսարանի ստորաբաժանումների գործունեության որակի ապահովման գործընթացների համակարգված և ապակենտրոնացված իրականացում** միասնական կանոնակարգային և ընթացակարգային հենքերի ու գնահատման չափանիշների կիրարկմամբ: Գործընթացների իրականացում **PDCA** մոդելով՝ պլանավորման (Plan), կատարման (Do), ստուգման (Check), գործողության (Act) փուլերով:

Գործընթացային մոտեցումը արտաքին միջավայրի պահանջներին արձագանքելու և փոփոխություններ կատարելու հնարավորություն է ապահովում և թույլ է տալիս վարելու կառավարման ու որակի բարելավման առավել ճկուն քաղաքականություն:

գ) **Դասավանդողների, ուսումնառողների, շրջանավարտների ու գործատուների հարցումների, կարիքների վերհանման, ինքնավերլուծության և ինքնագնահատման** արդյունավետ մեխանիզմների կիրառում համալսարանում կրթության որակի բարելավման և շարունակական բարձրացման նպատակով: Ուսումնառողների, դասավանդողների, գործատուների և այլ շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում կարևորվում է, հատկապես, հետադարձ կապի արդյունավետ իրականացման տեսանկյունից: Ռազմավարական առաջնահերթություններին միտված այդ գործընթացները համալսարանի բնականոն ուսումնամեթոդական գործունեության մաս են կազմում:

դ) **Համալսարանի շահակիցների ներգրավում և մասնագիտական ու ընդհանուր մասնակցության ապահովում, անհատական նախաձեռնությունների խթանում** կրթության և գիտահետազոտության որակի ապահովման, բարելավման գործընթացներում, որոնք համակարգի արդյունավետության բարձրացման երաշխիքներից են և հնարավորություն են տալիս օգտագործելու նրանց կարողությունները համալսարանի ռազմավարական նպատակների իրականացման համար բարձրագույն կրթության Եվրոպական տարածքում կրթության որակի ապահովման չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան: Այդպիսով, ստեղծված միջավայրում համալսարանի ողջ անձնակազմը, ուսանողները և արտաքին շահակիցները կարող են գիտակցորեն ներգրավվել հաստատության կրթության ու գիտահետազոտության որակի ապահովման գործընթացների մեջ և արդյունավետորեն աշխատել, որի համար երաշխիք են հանդիսանում համապատասխան կադրային քաղաքականությունը, աշխատակազմի պարտականությունների ու իրավունքների ռացիոնալ և հստակ բաշխումը և իրականացումը, գործընթացի կառավարումը, համապատասխան մշակույթի ձևավորումը, ներքին և արտաքին գնահատումները:

ե) **Համալսարանի պատասխանատվություն** իր կողմից մատուցվող մասնագիտական կրթության մատչելիության, թափանցիկության և հրապարակայնության, կրթական և գիտահետազոտական ծառայությունների որակի ապահովման համար, որը կարող է իրացվել որակի ապահովման թափանցիկ, հուսալի և վստահելի համակարգով:

ԲՈՒՀ-ը պատասխանատվություն է կրում որակի ապահովման՝ իր կողմից իրականացվող քաղաքականության մասին փաստաթղթերի էլեկտրոնային ռեգիստրում, պաշտոնական կայքէջում տեղեկատվության տեղադրման, ինչպես նաև շահակիցներին ներկայացման համար: Որակի քաղաքականության դրույթներն արտահայտող փաստաթղթերը տարածվում են համալսարանի կայքի, ներքին և արտաքին ցանցերի միջոցով, տեղեկացվում ստորաբաժանումներում ուսանողներին, աշխատակիցներին, ինչպես նաև արտաքին շահառուներին:

Տեղեկատվության կառավարումը վերաբերում է տարբեր մակարդակներում (ներբուհական, ազգային և միջազգային) կատարվող փոփոխությունների վերաբերյալ հիմնավորված և նորացվող տեղեկությունների հավաքագրմանը, վերլուծությանն ու տարածմանը: Գործընթացի արդյունավետության համար կարևոր նշանակություն ունի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը:

Որակի քաղաքականության իրականացման համար պատասխանատու են համալսարանի ներքին և արտաքին բոլոր շահակիցները, ինչպես նաև ողջ աշխատակազմը, որոնց աշխատանքային պարտականություններն արտահայտված են պաշտոնական նկարագրերում:

զ) **Որակի մշակույթի ձևավորում՝** հաշվի առնելով կրթական ծրագրերի, ուսանողների, այլ շահակիցների բազմազանությունը, կարիքները, սպասումները և պահանջները: Համալսարանի ՈԱԿ-ը որակի ապահովման գործընթացները իրականացնում է բոլոր շահակիցների մասնակցությամբ: Որակի ապահովումը նաև համալսարանի գործունեության հիմնական ոլորտներին ուղղված գործընթացների մշտադիտարկման և շահակիցների կարծիքների հիման վրա ձևավորվող քաղաքականության մեխանիզմների անընդհատ կատարելագործման ու արդյունավետության բարձրացման նպատակ է հետապնդում: Որակի ապահովման և կառավարման համակարգը կարգերի, ընթացակարգերի և ողջ գործիքակազմի ամբողջություն է՝ ուղղված որակի նպատակների սահմանմանը, իրականացմանը, արդյունավետության պարբերական գնահատմանը, վերանայմանը և բարելավմանը:

Որակի ապահովումը չի կարող սահմանափակվել միայն չափելի քանակական տվյալներով, քանի որ դա կարող է ուշադրությունը շեղել որակի ապահովման գործընթացի այլ կարևոր ասպեկտներից, որոնք որակի մշակույթի տիրապետող միջավայրում չափվում են որակական մոտեցումների միջոցով: Համալսարանի ղեկավարությունը տարածում է ակադեմիական ազատության, թիմային աշխատանքի, լավագույն արդյունքի ձգտման, նորարարության, կարգապահության և ծառայությունների շարունակական բարելավմանը միտված մշակույթ՝ մասնակցողական, հաշվետվողական և թափանցիկ կառավարման միջոցով:

Որակի ապահովման համար սահմանված չափանիշները և չափորոշիչները ձևակերպված են որպես բազմաձևության և նորարարության որոշակի ազատություն ապահովող տարածական սահմանումներ և կարող են ընկալվել որպես որակի ապահովման անհրաժեշտ ուղենիշներ:

Որակի կենտրոնի կողմից առանձնացված չափանիշները, չափորոշիչները և կատարողական ցուցանիշները պարբերաբար վերանայվում են և փոփոխվում՝

հավաստելու համար դրանց արդիականությունը, պիտանիությունը, համարժեքությունը և համապատասխանությունը որակի ապահովման և հավատարմագրման ոլորտում առաջացող նոր միտումներին ու զարգացումներին:

է) **Համալսարանի գործունեության որակի գնահատում** ըստ ընտրված նպատակների իրականացման աստիճանի, ինչը ենթադրում է նպատակների հստակություն, իրագործելիություն և չափելիություն, իրատեսական,ժամանակագրված և ձևավորված «SMART» սկզբունքով, այն է՝որոշակիություն (S), չափելիություն (M), հասանելիություն (A), իրագործելիություն (R), ժամանակի մեջ հստակ կանխորոշվածություն (T):



Որակի գնահատման գործընթացը արտացոլում է, թե որակի կառավարման և ապահովման քաղաքականությամբ ինչ չափով են իրագործվում համալսարանի առաքելությունը, զարգացման ծրագրերը, պլանները, հայեցակարգային, ռազմավարական նպատակները՝ բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական տարածքում գործող (ESG), ՀՀ ՈԱԱԿ-ի և Համալսարանի ՈԱԿ-ի կողմից մշակված և ներդրված չափանիշներին ու չափորոշիչներին համապատասխան կանոնակարգերի ու ընթացակարգերի հիման վրա: Ուսումնառողների և այլ շահառուների բավարարվածությունը՝ տրամադրվող կրթական ծառայությունների որակից, վերջիններիս մասնակցության և հետադարձ կապի ապահովման մեխանիզմներն առաջնային են:

ը) **Փոխկապվածություն որակի ապահովման ներքին և արտաքին գործընթացների միջև.**

Որակի ներքին ապահովումը արտաքին գնահատման հիմքն է և կառուցվում է վերջինիս չափանիշների և ընթացակարգերի հաշվառմամբ: Այդպիսով, համալսարանի

ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնագնահատումները որակի ապահովման ներքին և արտաքին գործընթացների հիմնական փոխկապակցող օղակներ են:

Որակի գործընթացները երաշխավորում են հասարակության շահերի ապահովումը բարձրագույն կրթության որակական չափորոշիչների պահպանման գործընթացում և հրապարակային են դարձնում համալսարանի կրթական ծառայությունների որակը ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակում: Դրանք միաժամանակ ապահովում են նաև հաստատության անկախությունը և ինքնավարությունը:

թ) Բարելավում.

Համալսարանը գնահատում է իր ձեռքբերումները ազգային և միջազգային համապատասխան հենանիշների նկատմամբ: ՎՊՀ-ի որակի գնահատման և բարելավման քաղաքականությունը համակարգվում է ՈԱ կենտրոնի կողմից մշակված ՈԱ ինստիտուցիոնալ և ծրագրային գործընթացների իրականացման սկզբունքներով ու ուղենիշներով, համապատասխան կանոնակարգերի և ընթացակարգերի կիրարկմամբ:

Համալսարանի որակի ապահովման մեթոդները և գործիքակազմը հիմնված են մշտադիտարկման, աուդիտի, հարցումների, կարիքների վերհանման, վերլուծությունների, ապացույցների/վկայությունների և բենչմարկինգի վրա, որտեղ վերջնարդյունքներն ու հետադարձ կապով ստացված տեղեկատվությունը հիմք են հանդիսանում եզրակացությունների, ընդհանրացումների և հետևությունների, ինչպես նաև դրանց հիման վրա արագ արձագանքման, փոփոխությունների պլանավորման ու բարելավման համար: Արդյունքում մշակվում են դիմորդների, սովորողների, շրջանավարտների և գործատուների՝ կրթության բովանդակությանը և կազմակերպմանը վերաբերող պահանջների բացահայտմանն ուղղված մեխանիզմներ և համապատասխան կանոնակարգային ու կազմակերպական հենք:

Որակի կենտրոնի սահմանած չափանիշները, չափորոշիչներն ու կատարողականի ցուցիչները պարբերաբար վերանայվում են և ուղենիշներ տրամադրվում որակի ապահովման ներքին չափանիշների և չափորոշիչների փոփոխման, որակի ներքին ապահովման գործընթացների և ընթացակարգերի մշակման ու իրականացման համար բարձրագույն կրթության եվրոպական տարածքում (ESG) գործող չափանիշների և չափորոշիչների փոփոխություններին համապատասխան՝ հավաստիացնելով, որ դրանք վավեր են, արդիական և համապատասխանում են միջազգային հավատարմագրման ու որակի ապահովման ոլորտում առկա վերջին միտումներին ու զարգացումներին:

ՎՊՀ որակի ապահովման քաղաքականության խնդիրները

Որակի ապահովման քաղաքականության իրականացումը պահանջում է որոշակի ընթացակարգային ուղղորդում: ՈԱ քաղաքականության միջոցով համալսարանը սահմանել է ՈԱ համակարգի կառուցվածքը, ենթակառուցվածքային գործընթացների իրականացման սկզբունքները, ուղենիշները, ընթացակարգերը:

Որակի ապահովման գործընթացները արտացոլում են հաստատության առանձնահատկությունները, ինչպես նաև հանրային կարիքների և տարածաշրջանային աշխատաշուկայի հետ կապված յուրահատուկ խնդիրներն ու նպատակները: Խնդիրները համահունչ են հաստատության որակի չափանիշներին ինստիտուցիոնալ և առանձին ֆակուլտետների ու մասնագիտական կրթական ծրագրի/ծրագրերի մակարդակներում.

- Երաշխավորել որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության համապատասխանությունը համալսարանի առաքելությանը, ռազմավարական նպատակներին և խնդիրներին:
- Նպաստել համալսարանի առաքելության հետևողական իրականացմանը՝ ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան:
- Նպաստել համալսարանում բարենպաստ նախապայմանների ստեղծմանը՝ պահանջարկված, արդի շուկայական պահանջներին համապատասխան ճկուն կրթական ծրագրերի ներդրման և իրականացման համար, որոնք հնարավորություն կտան՝ պատրաստելու կրթական վերջնարդյունքներին տիրապետող, հարափոփոխ միջավայրում գործելու ունակ մասնագետներ և նպաստելու տարածաշրջանի գիտատեխնիկական, տնտեսական և մշակութային զարգացումներին:
- Աջակցել ուսումնառողների և դասավանդողների համագործակցային միջավայրում ներդաշնակ աշխատանքի համար պայմանների ապահովմանը, որտեղ ուսանողներն օժտված են ինքնուրույնությամբ և ճկունությանբ, իսկ դասախոսների դերակատարության գլխավոր նպատակն է ուսանողների կրթական պայմանների ապահովման, կրթական ու հետազոտական գործունեության ուղղորդման, գիտելիքների յուրացման և կոմպետենցիաների ձեռքբերման գործընթացի կառավարման գործառույթի իրականացումը:
- Աջակցել համալսարանում գիտելիքի կառավարման գործընթացի արդյունավետության և հուսալիության, ինչպես նաև զարգացման ու կիրառելիության ապահովման համար պայմանների ստեղծմանը, որն ընդգրկում է նաև գիտահետազոտական աշխատանքներն ու կրթական ծրագրերի հետ նրանց կապակցումը:
- Նպաստել և խթանել հետազոտության ինտեգրումը դասավանդման և ուսուցման գործընթացներին՝ դրանցում լիարժեքորեն ներգրավելով դասախոսներին, ուսանողներին և այլ շահակիցներին:
- Ապահովել կրթական ծրագրերի կազմման, քննարկման, հաստատման, մշտադիտարկման, վերանայման և բարելավման ընթացակարգերի կիրառման որակը:

- Աջակցել կրթական, գիտահետազոտական նյութական, մարդկային և ֆինանսական ռեսուրսների հեռանկարանային ապահովման և ռացիոնալ ֆինանսավորման մեխանիզմների ու ձևերի կատարելագործմանը՝ կարևորելով նրանց նշանակությունը հասարակությանը մատչելի ու որակյալ կրթության ապահովման և համալսարանի ինստիտուցիոնալ զարգացման համար:
- Կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման նպատակով պարբերաբար հրահանգել համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների շահագրգիռ ներկայացուցիչներին՝ ակտիվորեն մասնակցելու որակի ներքին ապահովման ընթացակարգերի մշակման, ներդրման, ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացներին:
- Մշակել մեխանիզմներ և կապ ապահովել որակի ներքին և արտաքին գնահատման չափանիշների ու գործընթացների միջև:
- Նպաստել հաշվետվողականության և որակի բարձրացման գործընթացների համադրելիության ապահովմանը՝ աջակցելով հաշվետվողականության ընթացակարգերի, մեխանիզմների կատարելագործմանը և ձևաչափերի ռացիոնալացմանը:
- Ներդաշնակեցնել համալսարանի որակի ապահովման տարբեր ոլորտների գործունեության և գործառույթների իրականացման գործընթացները:
- Նպաստել համալսարանում որակի մշակույթի հաստատմանը, շարունակական բարելավմանը և հետագա զարգացմանը:
- Աջակցել որակի կառավարման, ապահովման և բարելավման գործընթացներում որակի ապահովման շահակիցների դերակատարության ընդլայնմանը և ամրապնդմանը:
- Պարբերական վերանայումների միջոցով շարունակաբար բարելավել համալսարանի որակի ապահովման համակարգը, կատարելագործել և արդիականացնել որակի ապահովման չափանիշները, չափորոշիչները, ընթացակարգերը, գործառույթները և դրանց հետ առնչվող պաշտոնական փաստաթղթերը:
- Որակի ապահովման ճկուն ընթացակարգերի և մեխանիզմների կիրառմամբ շարունակել համալսարանի Որակի Կենտրոնի ինտեգրման գործընթացը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին և կապերի ամրապնդումը ազգային ու միջազգային ՈԱ գործակալությունների, այլ բուհերի ՈԱ բաժինների հետ:
- Բացահայտել որակի համակարգի ուժեղ և թույլ կողմերը, սպառնացող ռիսկերը, հատուկ ուշադրության արժանի ոլորտները՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով շարունակական բարելավման համար:

Որակի ապահովման քաղաքականության իրականացման մեխանիզմներ և գործիքներ

ՎՊՀ Որակի ապահովման քաղաքականությունը կենտրոնացված է հայտարարված առաքելությունից բխող նպատակների կատարման ընթացքի որակի վրա: Կատարողականների պարբերաբար քննարկումները, գնահատումները և համապատասխան ցուցիչների վերանայումն ըստ թիրախների նման քաղաքականության բաղկացուցիչ մասն է: Ընդ որում, քննարկման հիմնական առարկան ուսանողների կողմից ակնկալվող կրթական արդյունքներին հասնելու աստիճանը և դրանից կախված՝ կրթական ծրագրերի հետագա բարելավումը և կատարելագործումն է:

ՎՊՀ որակի կառավարման և ապահովման քաղաքականությունն իրականացվում է բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական տարածքում գործող (ESG), և ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից մշակված չափանիշներին ու չափորոշիչներին համապատասխան ՎՊՀ ՈԱԿ-ի կողմից մշակված և ներդրված կանոնակարգերի ու ընթացակարգերի հիման վրա որակի ապահովման թափանցիկ, հուսալի և վստահելի համակարգով: ՎՊՀ որակի ապահովման քաղաքականությունն արտացոլում է հաստատության նպատակները և ներառում հիմնական միջոցների ցանկը, որոնցով դրանք իրականացվում են:

Որակի չափանիշները համահունչ են համալսարանի խնդիրներին՝ ինստիտուցիոնալ, առանձին ֆակուլտետների և մասնագիտությունների կրթական ծրագրի/ծրագրերի մակարդակներում: Համապատասխան ընթացակարգերը կազմված են ըստ ընտրված չափանիշների: Որակի ապահովման ընթացակարգերը կատարողականի վերստուգելի տվյալներով վկայում են, որ որակի ապահովման օբյեկտները պատշաճ կերպով դիտարկվել են: Ենթադրվում է, որ դրանք հստակ սահմանված են ինստիտուցիոնալ կամ ծրագրային խնդիրներին համադրելի, ինչպես նաև պարզ և չափելի ձևով: Փաստաթղթերում կատարողական տվյալների պարբերաբար արձանագրումը կարևոր նշանակություն ունի որակի արդյունավետ պահպանման և բարելավման համար:

Ընթացակարգերը ապահովում են որոշումների պաշտոնական, պարբերաբար և հետևողական կայացումը և իրականացման ընթացքը: Այդ պահանջը բխում է որակի վերանայման արդյունքներով հայտնաբերված տվյալներին արդյունավետ կերպով արձագանքելու համար երաշխիքներ ձևավորելու անհրաժեշտությունից: Հիմնական պահանջներից մեկը որակի պահպանման և բարելավման գործողությունների պարբերաբար փաստաթղթավորումն է: Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի որակի ապահովման այնպիսի ասպեկտների վրա, որոնք հեշտությամբ չեն ենթարկվում քանակապես արտահայտելի մշտադիտարկման: ԲՈՒՀ-ը պետք է որդեգրի համապատասխան քաղաքականություն և ռազմավարություն՝ երաշխավորելու համար, որ այդ ասպեկտները որակի ապահովման ընթացակարգերով չեն շրջանցվել:

ՎՊՀ որակի ապահովման քաղաքականությունն ուղղված է շահառուների կրթական և գիտահետազոտական նպատակների իրականացմանը (ուսանողներ, դասախոսներ,

վարչական աշխատակազմ, շրջանավարտներ, գործատուներ, այլ կազմակերպություններ) և հիմք է հանդիսանում համալսարանի գործունեության ու որոշումների կայացման համար: Այն միտված է արդյունավետ կազմակերպելու ՈԱ գործընթացները և նպաստելու որակի մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը համալսարանում:

ՎՊՀ-ի որակի ապահովման գործընթացները արտացոլում են համալսարանի տարածաշրջանային առանձնահատկությունները, ինչպես նաև հանրային կարիքների և աշխատաշուկայի զարգացումների հետ կապված յուրահատուկ խնդիրներն ու նպատակները:

Որակի քաղաքականության իրականացման, սահմանված նպատակների կատարման և համապատասխան պայմանների ստեղծման համար պատասխանատու են համալսարանի ղեկավարությունը և ողջ աշխատակազմը:

Համալսարանի որակի կառավարման և ապահովման քաղաքականությունը մատչելի է հասարակությանը և կարող է դառնալ նրա ռազմավարական մենեջմենտի մաս: Ներքին շահակիցների կողմից մշակված և իրականացվող այդ քաղաքականությունը ներդրվում է համապատասխան կառույցների միջոցով, ներգրավելով արտաքին շահակիցներին, շահագրգիռ այլ կազմակերպություններին:

Որակի ապահովման քաղաքականությունը ներառում է.

- համալսարանի ռազմավարության հետևողական իրականացում՝ որակի չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան,
- որակի ապահովման քաղաքականության իրականացման արդյունավետ մեթոդների և մեխանիզմների կիրառում,
- որակի համակարգի արդյունավետ գործունեության ապահովում,
- Ֆակուլտետների, ամբիոնների և այլ ենթակառուցվածքների գործունեության որակի ապահովման գործառույթներ,
- ուսումնառության, դասավանդման և հետազոտական աշխատանքների փոխկապակցում,
- որակի ապահովման գործընթացներում ուսանողների և դասախոսների մասնակցություն,
- համալսարանի աշխատակազմի վերապատրաստում, անհրաժեշտ ռեսուրսներով ապահովում, մասնագիտական որակի շարունակական բարձրացում,
- որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների առավելագույն ներգրավվածության, կարիքների ու պահանջների բացահայտման արդյունավետ մեխանիզմների ներդրում,
- որակին միտված թափանցիկ և հաշվետվողական մշակույթի ձևավորում և տարածում,
- համալսարանի գիտակրթական և կազմակերպական գործընթացների արդյունավետության ապահովում, ծառայությունների շարունակական բարելավում,
- տեղեկատվության հավաքագրման ու վերլուծության համար կայուն և արդյունավետ

մեխանիզմների կիրառում,

- որակի քաղաքականության արդյունավետության գնահատում համալսարանի հոգաբարձուների և գիտական խորհրդի, ֆակուլտետային խորհուրդների, ամբիոնների նիստերում և վերանայման համար առաջարկությունների (ձևավորված մշտադիտարկման, ներքին և/կամ արտաքին աուդիտի հաշվետվությունների, որակական հետազոտությունների, վերլուծությունների հիման վրա) ներկայացում,
- որոշումների կայացման ընթացքում ներքին և արտաքին շահառուների առավելագույն ներգրավվածություն և հետադարձ կապի իրացման պատասխանատվություն,
- արդի շուկայական պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի ճկունության և հարմարվողականության մեխանիզմների մշակում,
- ժամանակակից հարափոփոխ միջավայրում գործելու ունակ մասնագետներ պատրաստելու համար բարենպաստ պայմանների ստեղծում,
- կրթական որակյալ պայմանների ձևավորման համար կրթական ծրագրերի նախագծման, մշտադիտարկման, հաստատման և գնահատման գործընթացների կարևորում,
- իրականացվող կրթական ծառայություններից ուսումնառողների և այլ շահակիցների բավարարվածություն, նրանց միջոցով հետադարձ կապի ապահովման մեխանիզմների առկայություն,
- կարիքների և պահանջների բացահայտման համար կիրառվող մեխանիզմների անընդհատ կատարելագործում, արդյունավետության բարձրացում,
- ակադեմիական ազատության, նորարարության, թիմային աշխատանքի, ծառայությունների որակի շարունակական բարելավման, նախանշված վերջնարդյունքների ապահովման համար միջավայրի ձևավորում,
- հաշվետվողական, թափանցիկ, մասնակցային կառավարում, համապատասխան մշակույթի ձևավորում, տարածում,
- կրթական ծրագրերի և ծառայությունների մշտադիտարկում, աուդիտ, արդյունավետության, որակի գնահատում, վերանայում ECTS հենքով կրթական ծրագրերի և մասնագիտությունների ուսումնական պլանների մշակման, հաստատման, ներդրման, մշտադիտարկման, աուդիտի, գնահատման և պարբերաբար վերանայման ընթացակարգերին համապատասխան,
- որակի կառավարման ներդրված համակարգի անընդհատ կատարելագործում համալսարանի զարգացման հայեցակարգին, ռազմավարական նպատակներին, ծրագրերին, ՀՀ ՈԱԱԿ-ի չափանիշներին և ուղենիշներին համապատասխան,
- տեղեկատվության հավաքագրման ու վերլուծության համար կայուն և արդյունավետ մեխանիզմների ապահովում,
- ուսանողների, աշխատակիցների և արտաքին շահակիցների համար տեղեկատվության հասանելիության ապահովում,
- որակի քաղաքականության դրույթներն արտահայտող փաստաթղթերի (չափանիշներ, չափորոշիչներ, կանոնակարգեր, ընթացակարգեր,

վերլուծություններ, հաշվետվություններ, քննարկումներ, գնահատումներ) տարածում համալսարանի կայքի, ներքին և արտաքին ցանցերի միջոցով, ինչպես նաև ստորաբաժանումներում:

Որակի ապահովման ֆակուլտետային աշխատախմբերի կողմից.

- ֆակուլտետի կրթական ծրագրերի պլանավորման, մշակման, հաստատման, վերանայման և զարգացման պաշտոնական ընթացակարգերի ու որակի ապահովման գործընթացների վերահսկում, համապատասխան ուսումնական ռեսուրսներով ու պայմանների ապահովման, շարունակական բարելավման, նորացման, հարստացման և կատարելագործման գործընթացների աջակցում,
- կրթական ծրագրերի մեթոդական, տեխնիկական և մարդկային ռեսուրսներով պատշաճ ապահովվածության գործընթացների վերահսկում,
- ֆակուլտետի և ՎՊՀ-ի որակի ապահովման քաղաքականության, գործիքակազմի, գործընթացների մշակման և ներդրման աշխատանքներին մասնակցություն,
- ուսումնառության և հետազոտության արդյունավետ համակցման, որակի ապահովման և ներքին վերահսկման գործընթացների համար ֆակուլտետային պատասխանատու մարմինների ու անձանց համապատասխան կանոնադրական և ընթացակարգային գործառույթների կատարողականի մշտադիտարկում, գնահատում,
- ֆակուլտետում գործող կրթական ծրագրերի մշտական կատարելագործման, բարելավման նպատակով պարբերաբար մշտադիտարկում, առդիտի անցկացում, գնահատում (այդ թվում, արտաքին փորձաքննություն) և հաշվետվության ներկայացում,
- ֆակուլտետում շահակիցների պարբերաբար վերհանվող կարիքների, պահանջների, առաջարկների մասին իրազեկում, հետադարձ կապի իրացում և ազդեցության հաշվառում կրթական ծրագրերի իրականացման, վերանայման ու բարելավման գործընթացներում,
- մշտադիտարկման արդյունքում վերանայված ծրագրի հրապարակում շահակիցներին հասանելի դարձնելու նպատակով,
- կրթական ծրագրերի մշակման ձևաչափերի, չափանիշների, բովանդակության հաստատման և զարգացման պաշտոնական ընթացակարգերի վերահսկողություն,
- ուսանողների ձեռքբերումների ու առաջընթացի պարբերաբար մշտադիտարկում,
- ֆակուլտետի հետազոտական աշխատանքներում դասախոսների և ուսանողների արդյունավետ մասնակցությունն ապահովող քաղաքականության իրականացման վերահսկում,
- Ֆակուլտետ-հասարակական պատասխանատվություն հարաբերությունների մշտադիտարկում,
- Ֆակուլտետի ռազմավարական խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականության իրականացման որակի ապահովման մեխանիզմների կիրառման արդյունավետության գնահատում:

Որակի քաղաքականությունն իրականացվում է որակի ապահովման մեխանիզմներով և գործիքներով.



- մշտադիտարկում, աուդիտ, գնահատում, վերանայում,կատարելագործում,
- ստորաբաժանումների կողմից պարբերաբար ներկայացվող հաշվետվությունների վերլուծություն,
- շահակիցների կարիքների վերհանման, հարցումների արդյունքների վերլուծություններ, քննարկումներ,
- ինքնավերլուծություն, քննարկումներ, ինքնագնահատում,
- փորձագիտական եզրակացություն, ներքին և արտաքին գնահատումներ,
- ներքին և արտաքին շահակիցների միջև հետադարձ կապի իրացում աշխատաշուկայի, գործատուների և հասարակայնության պահանջների, առաջարկությունների հաշվառման, ռիսկերի պարբերաբար գնահատման միջոցով,
- համապատասխան շտկողական գործողություններ, բարելավման ծրագրեր և պլաններ,
- կադրերի հավաքագրման, ընտրման և նշանակման ընթացակարգեր,
- կրթական ծրագրերի դասընթացների և առանձին կրթական մոդուլների յուրացման արդյունքների գնահատում,
- կրթական ծրագրերի ընդհանուր կրթական ելքային արդյունքների գնահատում,
- ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և գործատուների միջև հետադարձ կապի միջոցով ստացված տվյալների վերլուծություն, գործառույթների պատշաճության մակարդակի ապահովում:

  Կիրառվում են նաև ցուցանիշները չափելու այլ մեթոդներ, օրինակ,
- վիճակագրական տվյալների վերլուծություն,
- հարցումների խմբային քննարկումներ,
- համադրական գնահատումներ, վերլուծություններ (benchmarking analysis),
- ներքին և արտաքին գործընկերային դիտարկումներ,
- տարբեր այլ մեխանիզմներ ու համակարգեր,

Արդյունքները բացահայտելու համար կարելի է կիրառել նաև ոչ պաշտոնական այնպիսի եղանակներ, ինչպես օրինակ, թիմային գնահատումները կամ արտերկրի գործընկերների հետ անցկացվող քննարկումները:

Որակի ապահովման քաղաքականության գնահատման սկզբունքները, մեխանիզմներ և ցուցիչներ

Բարձրագույն կրթական հաստատությունների որակի ապահովման համակարգը կարող է արդյունավետ իրականացվել, վերահսկվել, գնահատվել և զարգանալ որակի կառավարման ու ապահովման արդյունավետ քաղաքականությամբ:

Որակի ապահովման քաղաքականությունը արդյունավետ է, եթե փոխկապակցված բարձրորակ կրթության ու գիտահետազոտության միջոցով, հետևողականորեն ապահովվում են կրթական և գիտական վերջնարդյունքները՝ հաշվի առնելով ինչպես ազգային, այնպես էլ ներբուհական կոնտեքստը, ռազմավարական մոտեցումները: Որակի ապահովման քաղաքականությունը գործնականում իրականացվում է հաստատության ռազմավարական պլանին համապատասխան, որակի ապահովման կրթական, գիտահետազոտական, կազմակերպական և դաստիարակչական տարաբնույթ գործընթացներով բոլոր ստորաբաժանումների և շահակիցների մասնակցությամբ:

Որակի քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է համապատասխան գործընթացների համար պատասխանատու մարմինների, ստորաբաժանումների կատարողականների, ինքնավերլուծությունների, հաշվետվությունների քննարկումներով և ներքին ու/կամ արտաքին աուդիտի հաշվետվությունների, փորձագիտական եզրակացությունների, որակական հետազոտությունների, վերլուծությունների հիման վրա, որոնց ընթացքում ձևավորվում են նկատառումներ և վերանայման, բարելավման առաջարկություններ:

Գործընթացների որակի գնահատումը ՎՊՀ-ում կատարվում է համապատասխան գործիքակազմով, որոնց մի մասը ոչ միայն կիրարկված է, այլև վերանայված ու լրամշակված, իսկ մի մասը դեռևս փորձարկված չեն: Որակի ապահովման և կառավարման գործիքակազմի ընտրության համար հիմք են հանդիսացել նաև ՀՀ մասնագիտական կրթության ՈԱԱԿ-ի կողմից մշակված աշխատանքային նյութերը, կրթական հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության չափանիշները, չափորոշիչները: ՀՀ ՈԱԱԿ-ը առաջարկում է հետադարձ կապի վրա հիմնված որակի գնահատման հետևյալ մոդելը, որը կարող է նպաստել նրա կառավարման արդյունավետությանը /տես սխեման/:



Կատարողական ցուցիչները սովորաբար վերցվում են բոլոր փուլերից՝ ա/ ներդրումներ (քաղաքականության ընթացակարգ և կազմակերպում, ռեսուրսներ, անձնակազմի ներուժ, որակավորումներ և հմտություններ, որակի ապահովում), բ/ գործընթացներ (իրականցման ռազմավարություն,ընթացիկ վերանայում), գ/ արդյունքներ (ծրագրի գնահատման արդյունքներ, ուսանողների արձագանք, դասախոսների արձագանք, գործատուների, կառավարության և նախարարության արձագանք), դ/ բարելավում (բարելավման պլաններ):

Ներդրումներ դաշտը հիմնականում շեշտադրում է ռազմավարական պլանում դրված խնդիրներին հասնելու կրթական գործընթացի, ռեսուրսների և անձնակազմի ներուժի, ինչպես նաև գործընթացի կառավարման արդյունավետության վերաբերյալ որակի ապահովման մեխանիզմների քաղաքականությունը, ընթացակարգերը, կազմակերպումը:

Գործընթացներ դաշտը շեշտադրում է կրթական գործընթացները, մասնավորապես այն գործողությունները, որոնք ուղղված են ռազմավարության, պլանավորման և ողողրդող ընթացակարգերի ներդրմանը: Հատկապես, կարևոր է նախանշված խնդիրների իրականացման գործում ներգրավված անձնակազմի ներուժը: Այս հատվածում ինքնագնահատման համար որակի ապահովման պատասխանատու անձնակազմը պետք է վերլուծի և քննարկի նպատակին հասնելու համար ձեռնարկված քայլերը:

Արդյունքներ դաշտը նախանշում է այն քանակական և որակական ցուցիչները, որոնք սահմանում են, թե արդյոք ծրագրի/հաստատության նպատակները իրագործված են: Մոդելի երկու տարրերը՝ ներդրումներ և արդյունքներ, չափվում են ըստ

համապատասխանության: Դա արվում է ծրագրային գնահատման, ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և գործատուների հետադարձ կապի տվյալների վերլուծության միջոցով: Կան նաև ցուցանիշները չափելու այլ մեթոդներ, օրինակ, վիճակագրության վերլուծություն, հարցումներ, խմբային քննարկումներ, համադրական գնահատում, արտաքին գործընկերների դիտարկում և այլն: Արդյունքները բացահայտելու համար կարելի է կիրառել նաև ոչ պաշտոնական այնպիսի եղանակներ, ինչպիսք են, թիմային գնահատումները կամ արտասահմանյան գործընկերների հետ անցկացվող քննարկումները:

Բարելավում ոլորտում կատարվում են պլանների վերանայում, շտկումներ և/կամ վերամշակում: Եթե ԲՈՒՀ-ը չի հասել իր սահմանած նպատակներին, ապա այս փուլում դրանք պետք է ներառնի բարելավման ծրագրերում և ձեռնարկի համապատասխան միջոցառումներ:

Նախատեսված են գնահատման հետևյալ ձևերը.

- կադրային ներուժի գնահատում մշակված ձևաչափով՝ ըստ իրականացվող կրթական ծրագրերի,
- դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցումների արդյունքների վերլուծություն,
- ուսանողների և դասախոսների թիրախային ֆոկուս-խմբերի հարցաշարեր, արդյունքների վերլուծություն, ցուցանիշների համադրում,
- որակի ապահովման ֆակուլտետային հանձնախմբերի ուսումնասիրության արդյունքների վերլուծություն,
- դասախոսական կազմի վերապատրաստման գործընթացի մշտադիտարկման արդյունքների վերլուծություն, քննարկում,
- վերապատրաստման արդյունավետության ինքնագնահատում և գնահատում մշակված ձևաչափերով,
- շրջանավարտների՝ ստացած կրթությունից բավարարվածության մակարդակի վերաբերյալ հարցումների վերլուծություն և արդյունքների ուսումնասիրում,
- ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հանձնաժողովի հաշվետվության վերլուծություն, քննարկում,
- շրջանավարտներից գործատուների բավարարվածության մակարդակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, հարցումների վերլուծություն, ուսումնասիրում, քննարկում,
- դասավանդման և ուսումնառության գործընթացներում գիտահետազոտության ներդրման և արդյունավետության գնահատում մշակված ձևաչափով,
- ուսանող և դասախոս հետազոտողների հարցման կամ ֆոկուս խմբերի հարցաշարեր ուսումնառության հետ գիտահետազոտության համակցման արդյունավետության վերաբերյալ,
- գիտահետազոտական և կրթական ծրագրային գործընթացներում ուսանողների և դասախոսների մասնակցային ինքնագնահատում, գնահատում,
- դասախոսների և ուսանողների գիտահետազոտական գործունեության կանոնակարգային և ընթացակարգային փաստաթղթավորում,

- բուհի գիտահետազոտական գործունեության մշտադիտարկում,
- ուսանողների և դասախոսների գիտահետազոտական գործունեության արդյունքների վերաբերյալ պաշտոնական պատասխանատուների հաշվետվությունների վերլուծություն, քննարկում, գնահատում,
- գործընկեր կազմակերպությունների (հանրապետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, գիտատեխնիկական հաստատություններ, գործատու կազմակերպություններ, ձեռնարկություններ, հասարակական կազմակերպություններ, միջազգային գործընկերային տեխնիկա-տեխնոլոգիական կազմակերպություններ, ուսումնագիտական հաստատություններ, ընկերություններ) հետ համագործակցության արդյունքների գնահատում մշակված ձևաչափերով:

Ընտրված գործիքները նպատակային են և հնարավորություն են ընձեռնում բացահայտելու համալսարանի կրթական և գիտահետազոտական գործընթացների որակն ու համապատասխանությունը որակի ապահովման հայեցակարգին:

Համալսարանը հաստատել և գործադրում է որոշակի ընթացակարգեր որակի կառավարման ու ապահովման քաղաքականության իրականացման և առնչվող գործընթացների պարբերական փորձաքննության, գնահատման ու վերանայման համար: Որակի ապահովման ընթացակարգերը պետք է վերստուգելի տվյալների տեսքով տրամադրեն կատարողականի վկայություններ առ այն, որ որակի ապահովման օբյեկտները պատշաճ կերպով դիտարկվում են: Հետևաբար, որակի ապահովման օբյեկտները պետք է հստակ սահմանվեն, ինստիտուցիոնալ կամ ծրագրային խնդիրներին համադրելի, պարզ և չափելի ձևով:

Ընթացակարգերը ապահովում են որոշումների պաշտոնական, պարբերաբար և հետևողական կայացումն ու իրականացման ընթացքը, որը բխում է որակի վերանայման արդյունքներով հայտնաբերված տվյալներին արդյունավետ կերպով արձագանքելու և երաշխիքներ ձևավորելու անհրաժեշտությունից:

Կատարողական տվյալների պարբերաբար արձանագրումը կարևոր նշանակություն ունի որակի ապահովման և բարելավման համար:

Կատարողական ցուցիչների պարբերաբար վերանայումն ըստ թիրախների որակի ապահովման քաղաքականության բաղկացուցիչ մասն է:

Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի որակի ապահովման այնպիսի ասպեկտների վրա, որոնք չեն ենթարկվում քանակապես արտահայտելի մշտադիտարկման, ինչպես օրինակ.

- Որակի ներքին ապահովման քաղաքականությունը արտացոլում է ԲՈՒՀ-ի առաքելությունն ու որդեգրած արժեքները և սերտորեն կապված է թե՛ կառավարման ռազմավարական պլանի և թե՛ իրականացվող գործունեության հետ:
- Որակի ապահովման քաղաքականությունը կենտրոնացված է հայտարարված առաքելությունից բխող նպատակների կատարման ընթացքի որակի վրա:
- Որակի կառավարման և ապահովման գործընթացները առաքելության, արժեքների և տարբեր ծրագրերի, ձերբբերումների վերանայման, վերլուծության և զարգացման հնարավորություն են տալիս:

- Որակի ներքին ապահովման քաղաքականությունը սահմանում է որակի պարզ և չափելի խնդիրներ հաստատության տարբեր գործառույթների և մակարդակների համար:
- Որակի ապահովման քաղաքականությունը տարածվում է ԲՈՒՀ գործառույթների և գործողությունների այն բոլոր ասպեկտների վրա, որոնք ազդում են կրթական ծրագրերի չափորոշիչների պահպանման և որակի ապահովման վրա, ինչպիսիք են, դասավանդումը, հետազոտական աշխատանքները, ուսումնառության աջակցման ծառայությունները, կառույցները, լսարանները, կաբինետները, լաբորատորիաները, կահավորումն ու սարքավորումները, կառավարումը, համայնքային ծառայությունները և համագործակցությունը մասնագիտական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հետ:
- Որակի ապահովման քաղաքականության հաշվետվողականությունը և թափանցիկությունը, որը կարող է երաշխավորվել որակի ներքին ապահովման ռազմավարությամբ և ընթացակարգերի պարբերաբար վերանայմամբ՝ժամանակի մարտահրավերներին համապատասխան:

Կրթական ծրագրով ակնկալվող կրթական արդյունքներին ուսանողների ձեռքբերման հասնելու աստիճանը և կրթական ծրագրի հետագա բարելավումը յուրաքանչյուր անգամ քննարկման խնդիր կարող է դառնալ:

ԲՈՒՀ-ը պետք է որդեգրի համապատասխան քաղաքականություն և ռազմավարություն՝ երաշխավորելու համար, որ այդ ասպեկտները որակի ապահովման ընթացակարգերով չեն շրջանցվել:

Համալսարանը գնահատում է իր ծրագրերի վիճակը և հեռանկարները միջազգայնորեն ընդունված չափանմուշային (էտալոնային) կողմնորոշիչների (benchmarks) օգտագործմամբ:

Բավարար որակի հասնելու համար համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում և գործառույթներում պահանջվում է տեղեկատվական հոսքերի պարզեցում և ընթացակարգերի թափանցիկություն: Տեղեկատվության միջոցները կամ տեղեկատվության տրամադրման եղանակը մեծ նշանակություն ունեն կրթական և գիտահետազոտական գործունեության թափանցիկության ապահովման և վերահսկման համար:

Համալսարանը ձգտում է համարժեքացնել տեղեկատվական համակարգը և տեխնոլոգիաները՝ որակի ապահովմանն առնչվող տեղեկատվական հոսքերի ձևավորման ու արդյունավետ կառավարման նպատակով: Տեղեկատվական կառավարման համակարգն ապահովում է բոլոր իրավական ակտերը՝ռիսկերը ոլորտում հասցնելով նվազագույնի:

Համալսարանը կրթական ծրագրերի և գործունեության այլ ուղղությունների արդյունավետ կառավարման նպատակով հավաքագրում, վերլուծում, տարածում և կիրառում է համապատասխան տեղեկատվություն որակի ապահովման համատեքստում: Հանրության համար պարբերաբար հրապարակվում է արդիական, անաչառ, օբյեկտիվ քանակական ու որակական տեղեկատվություն՝ իրականացվող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ:

Համալսարանի սոցիալական դերը ներառում է ծրագրերի, ակնկալվող արդյունքների, ուսանողների և դասախոսների համար վերապատրաստման հնարավորությունների, դասավանդման, ուսումնառության և գնահատման ընթացակարգերի իրականացման, խրախուսման և որակավորումների մակարդակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը հանրությանը: Հրապարակված տեղեկատվությունը կարող է վերաբերվել շրջանավարտների հաջողություններին և զբաղվածությանը, ինչպես նաև ուսանողների բնութագրմանը ուսումնառության ընթացքում: Տեղեկատվությունը պետք է լինի ճշգրիտ, անկողմնակալ, օբյեկտիվ և հասանելի: Այն չպետք է օգտագործվել միայն մարկեթինգի նպատակով: Համալսարանը պետք է համոզված լինի, որ այն համապատասխանում է իր կողմից կիրառվող անաչառ և օբյեկտիվ պահանջներին:

Համալսարանի առաքելությունը, զարգացման հայեցակարգը, ռազմավարությունը և կանոնակարգող համապատասխան փաստաթղթերը, մշակված ուղեցույցները, մեթոդական ցուցումները, տեղեկատվական փաթեթները հրապարակված են, տարածված և հասանելի ուսանողներին, դասախոսներին ու մյուս շահակիցներին: Համալսարանի գործունեության մասին տեղեկատվությունը տեղադրված է համալսարանի համակարգչային կայքէջում և սոցցանցի, ՎՊՀ երկշաբաթերթի, հեռուստատեսության միջոցով հասանելի է և թափանցիկ շահակիցների համար:

Որակի ապահովման քաղաքականության գնահատման փաստաթղթային փաթեթը տեղադրվում է փաստաթղթերի էլեկտրոնային ռեգիստրում, պաշտոնական կայքէջում, ինչպես նաև ներկայացվում է նիստերին, ուսանողների, դասախոսների, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի, գործատուների և այլ շահակիցների հետ հանդիպումների ժամանակ:

Որակի գնահատման գործընթացում համալսարանի ներքին ու արտաքին հիմնական շահակիցների ակտիվ, լիարժեք ներգրավվածությունը որակի գնահատման գործընթացի արդյունավետության երաշխիքներից է:

Որակի ապահովման քաղաքականության բարելավման գործողություններ և մեխանիզմներ

Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման համար ՀՀ ՈԱԱԿ-ը մշակել է որակի ապահովման համապարփակ շրջանակ, որը թույլ է տալիս ուսումնառության միջավայրի պարբերաբար վերլուծություններ կատարել՝ կրթական գործընթացների որակի տեսանկյունից դիտարկելով ներկա վիճակը և բարելավմանն ուղղված գործողությունները, խոչընդոտները, ինչպես նաև հետագա զարգացմանը միտված նախաձեռնությունները ու մտադրությունները: Այն մշակված է ինչպես հաստատության գործունեության յուրաքանչյուր տիրույթն ամբողջապես գնահատելու, այնպես էլ դրանցից յուրաքանչյուրը մանրազնին ուսումնասիրելու, իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի մակարդակում ինքնագնահատում կատարելու և բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու համար: Որակի համակարգի շրջանակը նաև որակի արտաքին ապահովման գործընթացների հիմք է:

Որակի ինստիտուցիոնալ և ծրագրային կառավարման սահուն ընթացքը ապահովելու համար, ինչը կնպաստի կրթական գործընթացների որակի բարելավմանը, ՈԱԱԿ-ը որդեգրել է որակի ընդհանուր կառավարման (TQM) մոտեցումը՝ որպես ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնագնահատման գլխավոր սկզբունք, որը պետք է կիրառվի վերը նշված յուրաքանչյուր փուլում (ներդրում-գործընթաց-արդյունքներ-բարելավում). պլանավորում՝ խնդիրների սահմանում և դրանց լուծման չափման միջոցների ձևակերպում, Իրականացում՝ միջոցառումների իրականացում,Ստուգում և վերանայում՝ իրականացման ընթացիկ և շրջափուլային գնահատում, որը որոշում է՝արդյո՞ք արձանագրված արդյունքները համահունչ են պլանավորված խնդիրներին, Բարելավում՝ պլանների ամփոփում և/կամ վերաշտկում՝ նկատի ունենալով շահակիցների արձագանքը և ընդհանուր գնահատման արդյունքները: Անհրաժեշտության դեպքում նոր խնդիրներ են դրվում: Վերջնական արդյունքն ունի կարևոր նշանակություն տվյալ ոլորտի համար: Դա նշանակում է, որ կրթական ծրագրի որակը կախված է ոչ միայն գործընթացի համարժեքությունից, այլև այն բանից, թե ինչպես են այդ գործընթացները վերահսկվում ձեռք բերված արդյունքների տեսանկյունից: Փորձագետների կողմից ձեռք բերված տվյալները արտացոլում են ոլորտներում առկա բարձր ցուցանիշները:

Որակի կենտրոնի կողմից առանձնացված չափանիշները, չափորոշիչները և կատարողական ցուցանիշները պարբերաբար վերանայվում և փոփոխվում են՝ հավաստելու դրանց արդիականությունը, պիտանիությունը, համարժեքությունը և համապատասխանությունը որակի ապահովման և հավատարմագրման ոլորտում առաջացող նոր միտումներին ու զարգացումներին:



ԲՈՒՀ-ը պարբերաբար մշտադիտարկումներ, քննարկումներ և վերլուծություններ պետք է ձեռնարկի որակի ապահովման գործընթացի արդյունավետության, որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման խնդիրների վերաբերյալ, որի ընթացքում կատարվում են պլանների վերանայում, շտկումներ և/կամ վերամշակում: Եթե հաստատությունը չի հասել իր սահմանած նպատակներին, ապա պետք է մշակել բարելավման ծրագրեր՝ նրանցում ներառելով համապատասխան միջոցառումներ: Բարելավման միջոցառումները այդ փուլում կարող են բարելավման ծրագրերի մաս դառնալ:

Որակի շարունակական բարելավումն ընդգրկում է երեք հիմնական գործողություն՝նպատակների և չափորոշիչների սահմանում, գործունեության արժևորում ըստ այդ չափորոշիչների և հետագա գործունեության բարելավում: Դա ձևավորվում է որակի համապարփակ կառավարման շարժիչ սկզբունքով՝ պլանավորում, իրականացում, գնահատում և բարելավում՝ՊԻԳԲ գործընթացով, որի միջոցով հաստատությունը իր և շահակիցների համար հաստատում է, որ հնարավորինս բարձր չափորոշիչների է հասել գործունեության բոլոր ոլորտներում:
Այսպիսով, բարելավման գործողությունները կարող են ներառել.

- որակի ապահովման և կառավարման քաղաքականության արդյունավետության ապահովում կրթական և գիտահետազոտական արդյունքների տեսանկյունից մշտադիտարկման, ներքին և արտաքին գնահատումների, պարբերական վերանայումների և համապատասխան շտկողական գործողությունների միջոցով՝ հաստատության զարգացման հայեցակարգին, ռազմավարական նպատակներին և ծրագրերին համապատասխան,
- գործունեության հիմնական ոլորտներին ուղղված գործընթացների մշտադիտարկման և ներքին ու արտաքին շահառուներից ստացված կարծիքների հիման վրա գործող մեխանիզմների անընդհատ կատարելագործում, արդյունավետության բարձրացում, որակի ապահովում,

- որակի ապահովման և բարելավման համար առանցքային նշանակություն ունեցող կատարողական տվյալների պարբերաբար արձանագրում,վերլուծություն, քննարկում և գնահատում,
- հետադարձ կապի ազդեցության մեխանիզմով ներքին և արտաքին շահակիցների կարիքների, պահանջների հաշվառում և համապատասխան շտկողական գործողությունների իրականացում հաստատության գործունեության յուրաքանչյուր տիրույթն ամբողջապես գնահատելու և մանրազնին ուսումնասիրելու, իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի մակարդակում ինքնագնահատում կատարելու և բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու համար,
- ռազմավարական ծրագրերի, պլանների կատարման ընթացքի մշտադիտարկում և արդյունքների գնահատում ըստ գործունեության ոլորտների, անհրաժեշտության դեպքերում ծրագրերի վերանայում, վերամշակում, բարելավման ծրագրերի իրականացում,
- կրթական միջավայրի պարբերաբար վերլուծություններ կրթական և գիտահետազոտական գործընթացների որակի տեսանկյունից՝ դիտարկելով ներկա վիճակը և բարելավմանն ուղղված գործողությունները, խոչընդոտները, ինչպես նաև հետագա զարգացմանը միտված նախաձեռնությունները ու մտադրությունները,
- վերջնական արդյունքի կարևորության հաշվառում յուրաքանչյուր ոլորտի գործունեության գնահատման համար՝ի նկատի առնելով , որ կրթական ծրագրի որակը կախված է ոչ միայն գործընթացի համարժեքությունից, այլև այն բանից, թե ինչպես են այդ գործընթացները վերահսկվում ձեռք բերված արդյունքների տեսանկյունից,
- համալսարանի կրթական, մշակութային, դաստիարակչական, գիտահետազոտական, վարչական և կազմակերպչական գործընթացների ընթացակարգերի պարբերաբար վերանայում, կատարելագործում, արդյունավետության բարձրացում,
- որակի մշակույթի ձևավորում, շարունակական զարգացում, որակի ինստիտուցիոնալ և ծրագրային կառավարման սահուն ընթացքի ապահովում,
- արտաքին գործոնների ազդեցության հաշվառում, մարտահրավերների, ռիսկերի, սպառնալիքների կարճաժամկետ և երկարաժամկետ գնահատում և համապատասխան շտկողական գործողությունների իրականացում,
- հաստատության ռազմավարական զարգացման ուղենիշների, չափանիշների, չափորոշիչների հստակեցում որակի կենտրոնի կողմից առանձնացված չափանիշների, չափորոշիչների և կատարողական ցուցանիշների պարբերաբար վերանայում և փոփոխում՝ հավաստելու համար դրանց արդիականությունը, պիտանիությունը, համարժեքությունը և համապատասխանությունը որակի ապահովման և հավատարմագրման ոլորտում առաջացող նոր միտումներին ու զարգացումներին:

- ինքնագնահատում, համեմատական վերլուծություններ և առաջավոր փորձի կիրառում՝ միջազգայնորեն ընդունված չափանմուշային կողմնորոշիչների օգտագործմամբ,
- բենչմարկինք, գործող ծրագրերի վիճակի և հեռանկարների գնահատում և շտկողական գործողություններ որակի ապահովման և կառավարման հանրապետական ու միջազգային հենանիշներին, չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան,
- ներքին և արտաքին փորձագիտական եզրակացությունների հիման վրա առանձին ոլորտների կամ ինստիտուցիոնալ գործունեության արդյունքների գնահատում և համապատասխան բարելավման ծրագրերի իրականացում:

Օգտագործված հասկացությունների և հապավումների բացատրագիր

Որակ՝ գործունեության և ծառայությունների համապատասխանություն հաստատության առաքելությանը, տեսլականին, ռազմավարական նպատակներին և ներքին ու արտաքին չափանիշներին, չափորոշիչներին, շահառուների պահանջներին:

Որակի ապահովում՝ հաստատության գործունեության հիմնական ոլորտներին ուղղված գործընթացների մշտադիտարկման, համեմատական վերլուծությունների և ներքին ու արտաքին շահառուներից ստացված կարծիքների հիման վրա ձևավորվող մեխանիզմների բարելավում, անընդհատ կատարելագործում, արդյունավետության բարձրացում:

Որակի կառավարման համակարգ՝ կանոնակարգերի, ընթացակարգերի և գործիքակազմի համակարգված կիրառում որակի սահմանման, իրագործման, արդյունավետության գնահատման և վերանայման գործընթացների արդյունավետ իրականացման նպատակով:

Որակի ապահովման քաղաքականություն՝ հաստատության գործունեության որակի ապահովման և շարունակական բարձրացման ռազմավարության,մտադրությունների, գործընթացային մոտեցումների ձևակերպումներ, իրականացում որոշակի ընթացակարգային ուղղորդմամբ և տեղեկատվության ապահովմամբ առկա ռեսուրսների, միջոցների, ու գործընթացների վերաբերյալ,ինչպես նաև արդյունքների գնահատում ու համապատասխան շտկողական գործողություններ:

Չափանիշներ՝ հատուկ առանձնացված ձևակերպումներ, որոնք
վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության
գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ՝ գնահատման չափ, որի միջոցով որոշվում է կամ դասակարգվում ու գնահատում որևէ գործընթացի արդյունքը: Չափորոշիչային ձևակերպումները սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանության չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

Որակի գնահատման չափանիշներն ու շեմային պահանջները նախատեսված են ուսումնական հաստատությունների գործունեության և մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման ընթացքի ինքնավերլուծության և բարելավման կարիք ունեցող ոլորտների բացահայտման համար:

Ինստիտուցիոնալ կարողություն՝ որոշվում է ուսանողներին կայուն ու բարձրորակ կրթական ծառայությունների մատուցման բաղադրիչներով՝ նյութական և կադրային ռեսուրսներ, մտավոր մասնագիտական կարողություններ, որակյալ կրթություն և գիտահետազոտություն, բարենպաստ կրթական միջավայր, ձևավորված որակի մշակույթ, կրթական և գիտահետազոտական գործունեության ավանդույթ, հեղինակության և համբավի ճանաչում…

Ցուցանիշ՝ տվյալներ, որոնցով կարելի է դատել որևէ գործընթացի վիճակի կամ նրա արդյունքների և զարգացման մասին, օրինակ, ուսանողների, շրջանավարտների, գործատուների և ամբողջությամբ, հասարակության բավարարվածությունը:

Ցուցիչ՝ ուսումնասիրվող գործընթացի կամ օբյեկտի դիտման և չափման համար մատչելի բնութագիր, որը թույլ կտա դատել նաև նրանց այլ բնութագրերի մասին:

Քաղաքականության գործընթացներին առնչվող այլ փաստաթղթերի ցանկ և հապավումներ:

ՈԱԵՁՈՒ՝ որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ:

ENQA՝ բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական ասոցիացիա:

ESG (European Space Govern՝ Որակի ապահովման եվրոպական տարածք)՝ որակի ապահովման չափանիշներ բարձրագույն կրթության Եվրոպական տարածքում:

TQM (Total quality management)՝ Որակի ընդհանուր կառավարում:

ECTS (European Credit Transfer System)՝ Եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգ:

SMART՝ որոշակիության (S), չափելիության (M), հասանելիության (A), իրագործելիության (R), ժամանակի մեջ հստակ կանխորոշվածության (T) սկզբունք:

ՀՀ ՈԱՇ՝ Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակ:

ՈԱԱԿ չափանիշներ՝ Մասնագիտական Կրթության Որակի Ապահովման Ազգային Կենտրոնի չափանիշներ:

ՊԻԳԲ՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում (PDCA՝ պլանավորում, կատարում, ստուգում, գործողություն):

ՎՊՀ ՈԱԿ՝ Վանաձորի Պետական Համալսարանի Որակի Ապահովման Կենտրոն:

ՄՈՒՀ՝ մասնագիտական ուսումնական հաստատություն:

ՄԿԾ՝ մասնագիտության կրթական ծրագիր:

ՈԱՖԱ՝ որակի ապահովման ֆակուլտետային աշխատախումբ:

ՀԱՎԵԼՎԱԾ

Որակի ապահովման քաղաքականության իրականացման չափանիշներ և չափորոշիչներ

Բարձրագույն կրթության որակի ապահովման նպատակն է երաշխավորել մասնագիտական կրթության չափորոշիչների կատարումը և որակի բարելավումը՝ ուսանողների, գործատուների և հասարակության կարիքներին համապատասխան: Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթական դաշտում՝ որպես Բոլոնյան Գործընթացի իրականացման երաշխիք, ներդրված են բարձրագույն կրթության Եվրոպական տարածքում որակի ապահովման (ESG) գործող և նրանցից բխող ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից մշակված չափանիշներն ու չափորոշիչները.

1. Որակի ներքին ապահովման Եվրոպական չափանիշներ և ուղենիշներ

1.1.Որակի ապահովման քաղաքականություն

Մասնագիտական ուսումնական հաստատություններն իրենց ծրագրերի, կրթական աստիճանների որակի և չափորոշիչների ապահովման համար պետք է մշակեն քաղաքականություն և դրան առնչվող ընթացակարգեր: Նրանք պետք է հետևողականորեն նպաստեն իրենց աշխատանքում որակի կարևորությունը և ապահովումը գնահատող միջավայրի զարգացմանը: Այն ձեռք բերելու համար հաստատությունները պետք է զարգացնեն և իրագործեն որակի շարունակական ամրապնդման ռազմավարություն՝ կարևորելով հատկապես, ուսանողների և մյուս շահակիցների դերը:
ՉԱՓԱՆԻՇ: Ուսումնական հաստատության որակի ապահովման քաղաքականությունը մատչելի է հասարակությանը և հանդիսանում է նրանց ռազմավարական մենեջմենտի մաս: Ներքին շահակից կողմերը մշակել և ներդրել են որակի ապահովման արդյունավետ համակարգ համապատասխան կառույցների և գործընթացների միջոցով՝ ներգրավելով արտաքին շահագրգիռ կողմերին:

Որակի ապահովման համակարգի քաղաքականությունը և գործընթացները, որոնք ներկայացնում են բարելավման և կատարելագործման շրջափուլ, նպաստում են հաստատության հաշվետվողականությանը, զարգացմանը, կրթական միջավայրի, որակի մշակույթի ձևավորմանը, որտեղ բոլոր շահակիցները մասնակցում և պատասխանատվություն են կրում որակի ապահովման համար: Գործընթացի արդյունավետ աջակցման նպատակով քաղաքականությունը իրականացվում է պաշտոնական կարգավիճակով և մատչելի է հասարակայնությանը: Որակի ապահովման քաղաքականությունը արդյունավետ է, եթե այն գործնականում իրացնում է կապը գիտահետազոտության, ուսումնառության, դասավանդման միջև և հաշվի է առնում ներբուհական ու ազգային կոնտեքստները, ռազմավարական մոտեցումները և աջակցում.

- որակի ապահովման համակարգի կազմակերպմանը;
- ամբիոններին, ֆակուլտետներին և կառուցվածքային այլ ստորաբաժանումներին, ինչպես նաև հաստատության վարչակազմին և ուսանողությանը, որոնք

կատարում են իրենց պարտականությունները որակի ապահովման բնագավառում;

- ակադեմիական ազնվությանը, ազատությանը և ահանդուրժողականությանը խաբեբայության դեմ;
- ուսանողների և աշխատակիցների պաշտպանությանը խտրականության և անհանդուրժողականության դրսևորումներից;
- արտաքին շահակիցների մասնակցությանը որակի ապահովման գործընթացներում:

1.2. Կրթական ծրագրերի մշակում և հաստատում

Մասնագիտական ուսումնական հաստատությունները պետք է ունենան ծրագրերի և կրթական աստիճանների հաստատման, պարբերական վերանայման և մշտադիտարկման հաստատված մեխանիզմներ՝ մշակված համապատասխան չափանիշներով:

ՉԱՓԱՆԻՇ: ԲՈՒՀ-ը ունի կրթական ծրագրերի մշակման և հաստատման ընթացակարգ՝դրված նպատակներին և ակնկալվող արդյունքներին համապատասխան: Ծրագրի յուրացման արդյունքում շնորհվող որակավորումը հստակ որոշված է ՀՀ ՈԱԱՇ-ին և բարձրագույն կրթության Եվրոպական տարածքի որակավորումների կառուցվածքին համապատասխան:

Կրթական ծրագրերը հանդիսանում են ԲՈՒՀ-ի կրթական առաքելության առարկան, որոնք ուսանողներին ապահովում են ինչպես ակադեմիական գիտելիքներով, այնպես էլ անհրաժեշտ կարողություններով ու հմտություններով, նպաստում նրանց անձնական զարգացմանը և կիրառվում ապագա կարիերայում:

- Կրթական ծրագրերը.
- մշակվում են համալսարանի ինստիտուցիոնալ նպատակներին համապատասխան և արտահայտում են ուսուցման հստակ արդյունքներ;
- արտահայտում են բարձրագույն կրթության՝ Եվրոպայի խորհրդի կողմից որոշված նպատակները:
- մշակվում են ուսանողների մշտական առաջընթացի և զարգացման համար ուսումնառության ընթացքում;
- որոշում են ուսանողների ծանրաբեռնվածությունը ըստ ESG-ի;
- ներառում են ուսանողների արտադրական պրակտիկայի անցման բնույթը և տեղը;
- մշակվում են ուսանողների և շահագրգիռ այլ կողմերի մասնակցությամբ;
- ենթարկվում են արտաքին փորձաքննությունների և ապահովված են տեղեկատվական ռեսուրսներով;
- քննարկվում, հաստատվում են համապատասխան վարչական օղակներում և ստանում պաշտոնական փաստաթղթի կարգավիճակ;

1.3. Ուսանողակենտրոն ուսուցում, դասավանդում և գնահատում

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ը ապահովում է կրթական այնպիսի ծրագրերի մշակում, որոնք ուսանողներին մղում են ակտիվ դերակատարման ուսումնական գործընթացում, իսկ նրանց առաջադիմության գնահատումը արտահայտում է այդ մոտեցումը:

Ուսանողակենտրոն ուսուցումը և դասավանդումը կարևոր դեր են խաղում ուսումնական գործընթացում ուսանողների մոտիվացիայի, ինքնառեֆլեկսիայի և մասնակցության համար, որը պահանջում է ուսումնական ծրագրերի մշակման, դասավանդման, ինչպես նաև ուսուցման արդյունքների գնահատման նկատմամբ հավասարակշռված մոտեցում: Այն ենթադրում է.

- հարգանքի և ուշադրության դրսևորում ուսանողների և նրանց կարիքների նկատմամբ, ինչը ուսուցման ավելի ճկուն հնարավորություն է թույլ տալիս;
- ուսուցման տարբեր ձևերի կիրառում այնտեղ, որտեղ դա հնարավոր է;
- տարաբնույթ մանկավարժական մեթոդների օգտագործում;
- մանկավարժական մեթոդների և գիտելիքների փոխանցման եղանակների ադապտացում և գնահատում;
- ուսանողի ինքնավարության զգացումի խրախուսում և միաժամանակ դասախոսի կողմից անհրաժեշտ աջակցություն և ղեկավարում;
- փոխադարձ հարգանքի ամրապնդում ուսանողի և դասախոսի միջև;
- ուսանողների բողոքների քննարկման ընթացակարգի առկայություն:

Հաշվի առնելով, ուսանողների առաջադիմության գնահատման կարևորությունը զարգացման և ապագա կարիերայի համար, գնահատման որակի ապահովման ընթացակարգերում պետք է ի նկատի ունենալ, որ.

- դասախոսները տիրապետում են թեստավորման և քննությունների անցկացման գոյություն ունեցող մեթոդներին, ինչպես նաև բարձրացնում են իրենց որակավորումը կատարելագործման համար այդ բնագավառում;
- գնահատման չափանիշները և մեթոդները նախապես հրապարակված են;
- գնահատումը թույլ է տալիս ուսանողներին ցուցադրել ուսուցման արդյունքների ձեռք բերման մակարդակը: Ուսանողները պետք է ստանան հետադարձ կապ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ խորհուրդներ ուսուցման գործընթացի վերաբերյալ;
- հնարավորության դեպքում քննությունը անց է կացվում ոչ մեկ քննողի կողմից;
- գնահատման կարգում հաշվի են առնված մեղմացնող հանգամանքներ;
- գնահատման մոտեցումները միատեսակ են և օբյեկտիվ բոլոր ուսանողների նկատմամբ և կատարվում են մշակված ու ներդրված կանոններով;
- ուսանողների ուսումնառությունը գնահատվում է ընդունված և հանրությանը հասանելի չափանիշներով, սահմանված կարգով և ընթացակարգերով, որոնք համահավասար են կիրառվում:
- նախատեսված է բողոքարկման պաշտոնական ընթացակարգ:

1.4. Ուսանողների ընդունելություն, առաջադիմություն և վկայագրում

ՉԱՓԱՆԻՇ: Ուսումնական հաստատությունները միատեսակ են կիրառում նախապես որոշված և հրապարակված կանոնները, որոնք ընդգրկում են ,, կյանքի շրջափուլի" բոլոր էտապները, այսինքն, ընդունելություն, ճանաչում և որակավորում:

Ուսանողների ակադեմիական կարիերայի զարգացման համար անհրաժեշտ պայմանները և աջակցությունը պետք է ապահովվեն առանձին ուսանողների հետաքրքրությունների և կրթական ծրագրերի առանձնահատկությունների հաշվառմամբ: Կարևոր է, որպեսզի ողջ գործընթացը համապատասխանի դրված նպատակներին, հատկապես, ուսանողների շարժունության ներկա պայմաններում ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում: Ուսանողների ընդունելության չափանիշները և գործընթացը պետք է կատարվեն միատեսակ և թափանցիկ, որից հետո ուսանողների համար ստեղծվեն ԲՈՒՀ-ին և կրթական ծրագրերին համակերպվելու հնարավորություն: Ուսումնական հաստատությունը պետք է ներդնի գործընթացներ և գործիքներ մշտադիտարկման և հետագա գործողությունների համար ուսանողների առաջադիմության վերաբերյալ տեղեկատվության հիման վրա: Ավարտական փուլը հանդիսանում է ուսանողների ուսումնառության կուլմինացիան, որի ժամանակ նրանք ստանում են ստացած որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ ներառյալ ձեռք բերած արդյունքները, կոնտեքստը, բովանդակությունը, մակարդակը, կրթության կարգավիճակը և այն հաջող ավարտելու վկայագիրը: Բարձրագույն՝ ներառյալ նախորդող կրթության որակավորումների և ուսուցման շրջանների ճանաչումը հանդիսանում է ուսանողների առաջադիմության առաջընթացի անբաժանելի բաղադրիչ և նպաստում նրանց շարժունության զարգացմանը: Ճանաչման ընթացակարգը հիմնված է ճանաչման ինստիտուցիոնալ պրակտիկայի վրա՝ Լիսաբոնյան կոնվենցիային համապատասխան, ուսումնական այլ հաստատությունների, որակի ապահովման գործակալությունների և երկրի ներսում որակավորումների համաձայնեցված ճանաչման ENIC/NARIC ազգային կենտրոնների հետ համագործակցության միջոցով:

1.5. Դասավանդող կազմ

Մասնագիտական ուսումնական հաստատությունները պետք է ունենան որակյալ և բանիմաց անձնակազմով համալրման մեխանիզմներ: Դասավանդող անձնակազմը պետք է մասնակցի արտաքին վերանայմանը, և նրանց կատարած աշխատանքի որակի մասին տեղեկատվությունը պետք է արտացոլվի վերջնական զեկույցում:

ՉԱՓԱՆԻՇ: Ուսումնական հաստատությունները վստահ են իրենց դասախոսների կոմպետենտության մեջ: Աշխատակիցների ընտրության, զարգացման և մասնագիտական աճի գործընթացները արդար են և թափանցիկ:

Դասախոսին գլխավոր դեր է պատկանում ուսանողների բարձրորակ ուսուցման և գիտելիքների, կոմպետենցիաների ու հմտությունների ձեռք բերման գործընթացներում: Ուսանողական բազմաբնույթ կազմը և ուսուցման արդյունքների նկատմամբ հետաքրքրվածությունը պահանջում է ուսանողակենտրոն ուսուցում և դասավանդում: ԲՈՒՀ-երը պատասխանատվություն են կրում աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության և նրանց արդյունավետ աշխատանքի բարենպաստ պայմանների ապահովման համար, ինչը ենթադրում է.

- աշխատակիցների ընտրության և պայմանների ապահովման հասկանալի, արդարամիտ և թափանցիկ գործընթացներ, որնցով կարևորվում է դասախոսական գործունեությունը,
- պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման հնարավորությունների առաջարկում և նպաստում,
- ուսուցման և գիտահետազոտության միջև կապի ամրապնդում և այդ ուղղությամբ գործունեության խրախուսում,
- դասավանդման մեթոդների մեջ նորարարությունների և ուսուցման գործընթացում նոր տեխնոլոգիաների ներդրման աջակցում:

1.6. Ուսուցման ռեսուրսներ և ուսանողներին աջակցման համակարգ

ՉԱՓԱՆԻՇ: Ուսումնական հաստատությունն ունի բավարար ֆինանսավորում ուսուցման և դասավանդման, համարժեք ու մատչելի ուսումնական ռեսուրսների ապահովման և ուսանողնորին աջակցման համար:

Մասնագիտական ուսումնական հաստատությունները պետք է հավաստեն, որ ուսանողներն ապահովված են առարկայական ծրագրերով նախատեսված ռեսուրսներով: Արդյունավետ ուսուցման, ուսանողներին օգնության և աջակցման նպատակով ուսումնական հաստատությունը պետք է ուսանողներին տրամադրի ինչպես նյութական /գրադարաններ, ուսումնագիտական կաբինետներ, լաբորատորիաներ, ուսուցման ու հետազոտությունների համար սարքավորումներ, տեղեկատվական տեխնոլոգիական ինֆրակառուցվածք/, այնպես էլ մարդկային (ծրագրի ղեկավարներ, դասավանդողներ, խորհրդատուներ, դաստիարակներ և այլն) ռեսուրսներ: Հաստատությունը վերահսկում է ռեսուրսների ծախսը և ցույց տալիս, որ առկա ռեսուրսներով հասնում է հնարավորինս բարձր որակի: Ուսումնական ռեսուրսների պլանավորման, բաշխման, տրամադրման և ուսանողներին աջակցման, ինչպես նաև ուսանողակենտրոն ուսուցման ու դասավանդման ճկուն մոդելների անցման ժամանակ պետք է հաշվի առնվեն ուսանողների բազմաբնույթ համակազմի պահանջները (օրինակ, տարիքավոր, աշխատող, ոչ լրիվ ժամանակով սովորողներ, սահմանափակ հնարավորություններով ուսանողներ, արտասահմանյան ուսանողներ): Ուսանողների աջակցման պայմանները և միջոցառումները կարող են կազմակերպվել տարբեր ձևերով՝ կախված ինստիտուցիոնալ կոնտեքստից, իսկ որակի ապահովման ներքին համակարգը երաշխավորում է ռեսուրսների

համապատասխանությունը ու մատչելիությունը դրված նպատակներին և ուսանողների տեղեկացվածությունը ծառայությունների մասին: Ուսանողների աջակցման և ծառայությունների մատուցման գործընթացում վճռական նշանակություն ունի վարչական և տեխնիկական անձնակազմի դերը, ուստի նրանք պետք է ունենան համապատասխան կոմպետենցիաներ և որակավորման շարունակական բարձրացման պայմաններ ու հնարավորություններ: Աջակցման ծառայությունների դերը կարևոր նշանակություն ունի հատկապես ուսանողների շարժունության խթանման համար:

1.7. Տեղեկատվության կառավարում

Մասնագիտական ուսումնական հաստատությունները պետք է իրենց առաջարկած ծրագրերի և կրթական աստիճանների մասին մշտապես հրապարակեն ինչպես քանակական, այնպես էլ որակական նորացված, անաչառ տեղեկատվություն: Հավաստի տեղեկատվությունն անհրաժեշտ պայման է որոշում ընդունելու համար և իմանալու՝ ինչն է աշխատում արդյունավետ, իսկ ինչը բարելավման կարիք ունի: Կարող են օգտագործվել տեղեկատվության հավաքման և վերլուծման տարբեր մեթոդներ: Կարևոր է, որպեսզի նրանցում, ինչպես նաև հետագա գործողությունների պլանավորման մեջ մասնակցեն ուսանողները և աշխատակիցները:

ՉԱՓԱՆԻՇ: Ուսումնական հաստատությունները պետք է երաշխավորեն, որ կրթական ծրագրերի և գործունեության այլ ուղղությունների արդյունավետ կառավարման համար համապատասխան տեղեկատվություն են հավաքում, վերլուծում և օգտագործում:

Կրթական ծրագրերի և գործունեության այլ տեսակների վերաբերյալ տեղեկատվության հավաքման և վերլուծման արդյունավետ գործընթացները մեծ ներդրում են որակի ներքին ապահովման աշխատանքներում: Չնայած, տեղեկատվության հավաքման ձևերը որոշ առումով կախված են կրթական հաստատության տեսակից և առաքելությունից, սակայն անկախ դրանից, կարևորվում է հետևյալ տեղեկատվությունը.

- գործունեության առանցքային ցուցանիշները,
- ուսանողական համակազմի մասին տվյալները,
- ուսանողների ձեռքբերումները, առաջադիմության մակարդակը և հեռացումները,
- ուսանողների բավարարվածությունը ընտրած կրթական ծրագրերից,
- կրթական ծրագրերի ռեսուսների և ուսանողների աջակցման ծառայությունների մատչելիությունը,
- շրջանավարտների կարիերայի աճը:

1.8. Հանրային տեղեկատվություն

ՉԱՓԱՆԻՇ: Ուսումնական հաստատությունը պետք է հրապարակի իր գործունեության մասին պարզ, ճշգրիտ, օբյեկտիվ, հրատապ և մատչելի տեղեկատվություն (ներառյալ ծրագրերը):

Մասնագիտական ուսումնական աստատությունները պետք է հավաստեն, որ իրենց ուսումնական ծրագրերի և այլ գործառույթների կառավարման արդյունավետության նպատակով հավաքագրում, վերլուծում և օգտագործում են համապատասխան տեղեկատվություն: ՄՈՒՀ-ի մասին տեղեկատվությունը օգտակար է դիմորդների, ուսանողների, շրջանավարտների, այլ շահագրգիռ կողմերի և հասարակայնության համար: Ուստի, ուսումնական հաստատությունը պետք է տեղեկատվություն տրամադրի իր գործունեության վերաբերյալ՝ ներառյալ առաջարկվող կրթական ծրագրերը և ըստ նրանց ընդունելության չափորոշիչները, շնորհվող որակավորումները, դասավանդումը, ուսուցումը, գնահատման ընթացակարգերը (անցումային միավորների նշումով), ուսուցման հնարավորությունները և շրջանավարտների աշխատանքի տեղավորումը:

1.9. Մշտադիտարկում և ծրագրերի պարբերական գնահատում

Կրթական ծրագրերը պարբերաբար դիտարկվում և վերանայվում են ուսանողների և այլ շահակիցների մասնակցությամբ: Հավաքված տեղեկատվության վերլուծության հիման վրա ծրագիրը դրվում համապատասխանության մեջ ժամանակակից պահանջների և չափանիշների հետ: Վերամշակված ծրագիրը հրապարակվում է:

ՉԱՓԱՆԻՇ: Ուսումնական հաստատությունը պետք է կատարի մշտադիտարկում և ծրագրերի դիտարկում, որպեսզի ապահովի դրված նպատակների ձեռքբերումները և համապատասխանությունը ուսանողների և հասարակայնության պահանջներին, ինչը կնպաստի ծրագրերի շարունակական բարելավմանը: Ցանկացած պլանավորվող գործունեության և ստացված արդյունքի վերաբերյալ պետք է իրազեկվեն շահագրգիռ բոլոր կողմերը:

- Կրթական ծրագրերի մշտադիտարկումը և վերանայումը ուղղված են նրանց արդյունավետ իրականացմանը և ուսանողների ուսուցման համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը և ընդգրկում են.
- ծրագրի բովանդակությունը կոնկրետ դիսցիպլինների վերաբերյալ՝ գիտական վերջին հետազոտությունների լույսի տակ, ծրագրի հրատապության ապահովման նպատակով,
- հասարակության պարբերաբար փոփոխվող պահանջները,
- ուսանողների ուսումնական ծանրաբեռնվածությունը, առաջադիմությունը և ավարտումը,
- ուսանողների գնահատման արդյունավետությունը,

- ծրագրով ուսուցման ուսանողների պահանջների բավարարվածության սպասումները, ուսանողների աջակցությունը, ուսուցման միջավայրը, ծառայությունները և նրանց համապատասխանությունը ծրագրի նպատակներին:

1.10. Որակի արտաքին պարբերական ապահովում

ՁԱՓԱՆԻՇ: Ուսումնական հաստատությունը պետք է պարբերաբար անցնի որակի արտաքին ապահովման ընթացակարգերով՝ ESG –ին համապատասխան:

Համալսարանի գործունեության արտաքին որակի վերահսկողության գործընթացները իրականացվում են Բարձրագույն կրթության Եվրոպական տարածքում (ESG) գործող չափանիշներին, չափորոշիչներին և ուղենիշներին (ՈԱԵՁՈՒ) համապատասխան:

Մասնագիտական կրթության որակի ապահովումը նոր զարգացող մոտեցում է ՀՀ կրթության համակարգում: Ուստի, համալսարանի ՈԱԿ-ը պարբերաբար վերանայում է սույն ուղենիշները, չափանիշները և չափորոշիչներն՝ ազգային և միջազգային լավագույն փորձին համապատասխան:

Որակի արտաքին ապահովման գործընթացներն ու ընթացակարգերը ուղղված են ներքին որակի ապահովման գործընթացների արդյունավետության ստուգմանը և ծառայում են որպես զարգացման ու նոր հնարավորությունների իրացման գործոններ, որոնք նաև տեղեկատվություն են տրամադրում հասարակայնությանը ԲՈՒՀ-ի գործունեության որակի մասին:

Ուսումնական հաստատությունները պարբերաբար ենթարկվում են որակի արտաքին ապահովման ընթացակարգերին՝ օրենսդրության պահանջներին համապատասխան, որի շրջանակներում նրանք գործում են և որից կախված, որակի արտաքին ապահովումը իրականացվում է տարբեր ձևերով ու կառուցվածքային տարբեր մակարդակներով (ուսումնական հաստատություն, ֆակուլտետ, կրթական ծրագիր):

Որակի ապահովումը անընդհատ գործընթաց է, որը չի ավարտվում միայն արտաքին հետադարձ կապի ապահովմամբ, հաշվետվության ներկայացմամբ կամ հաջորդ ընթացակարգերի ընդունմամբ ԲՈՒՀ-ի շրջանակներում: Յուրաքանչյուր անգամ՝ հաշվի առնելով որակի արտաքին ապահովման վերջին ընթացակարգերից հետո ձեռքբերած առաջընթացը, պետք է ստեղծել փոխադարձ կապեր, նախապատրաստվել հաջորդ ընթացակարգին և հաստատության տիրույթում համապատասխան հաջորդիվ գործողություններ իրականացնել:

2.Որակի արտաքին ապահովման չափանիշներ և ուղենիշներ

ԲՈՒՀ-երի կողմից մատուցվող որակի ապահովման ծառայությունների՝ միջազգային մակարդակում պատշաճությունն ու ճանաչումը երաշխավորելու համար միջազգային գործակալությունների կողմից պարբերաբար կատարվում է Եվրոպական չափանիշներին և չափորոշիչներին համապատասխանող արտաքին փորձաքննություն:

2.1 Որակի ներքին ապահովման ընթացակարգերի հաշվառում

ՉԱՓԱՆԻՇ: Որակի արտաքին ապահովման ընթացակարգերը պետք է հաշվի առնեն որակի ներքին ապահովման գործընթացների արդյունավետությունը, որոնք ներկայացված ն ESG - ի առաջին մասում:

Բարձրագույն կրթության որակի ապահովումը հմնված է ԲՈՒՀ-ի պատասխանատվության վրա կրթական ծրագրերի և մատուցվող ծառայությունների որակի համար, ուստի կարևոր է, որպեսզի որակի արտաքին ապահովումը հիմնվի որակի ապահովման ԲՈՒՀ-ի պատասխանատվության ճանաչման և աջակցման վրա: Որակի ներքին և արտաքին ապահովման ընթացակարգերի միջև կապի ապահովման համար որակի արտաքին ապահովման ընթացակարգերը պետք է հաշվի առնեն որակի ներքին ապահովման չափանիշները:

2.2. Որակի արտաքին ապահովման ընթացակարգի մեթոդաբանության մշակում

ՉԱՓԱՆԻՇ: Որակի արտաքին ապահովման ընթացակարգերը պետք է որոշվեն և մշակվեն որոշակի նպատակների և խնդիրներին համապատասխան՝ հաշվի առնելով գոյություն ունեցող իրավական նորմատիվային դաշտը: Շահագրգիռ բոլոր կողմերը պետք է ընդգրկված լինեն ընթացակարգերի մշակման և անընդհատ կատարելագործման գործընթացներում:

Որակի արտաքին ապահովման ընթացակարգերի համակարգը կարող է գործել ճկուն, եթե ուսումնական հաստատությունը կարողանա ցուցադրել որակի ներքին աապահովման սեփական ընացակարգերի արդյունավետությունը: Որակի արտաքին ապահովման ընթացակարգերի արդյունավետության և օբյեկտիվության ապահովման համար անհրաժեշտ է շահակիցների հետ համաձայնեցված որոշակի նպատակների առկայություն: Ընդ որում, գործընթացների նպատակները, խնդիրները և ներդրումները պետք է.

- հաշվի առնեն ուսումնական հաստատության ծանրաբեռնվածության մակարդակը և այդ գործընթացների արժեքը,
- աջակցեն ուսումնական հաստատությանը գործունեության որակի բարելավման մեջ,
- նպաստեն ուսումնական հաստատության ձգտմանը այդ կատարելագործման ցուցադրման մեջ,

- համագործակցեն պարզ և հստակ տեղեկատվության ստացման մեջ հաստատության ձեռբերումների և հետագա գործունեության վերաբերյալ:

Որակի ապահովման ընթացակարգերը պետք է վերստուգելի տվյալների տեսքով տրամադրեն կատարողականի վկայություններ առ այն, որ որակի ապահովման օբյեկտները պատշաճ կերպով դիտարկվել են: Հետևաբար, որակի ապահովման օբյեկտները պետք է հստակ սահմանվեն, ինստիտուցիոնալ կամ ծրագրային խնդիրներին համադրելի, ինչպես նաև պարզ և չափելի լինեն:

Ընթացակարգերը պետք է ապահովեն որոշումների պաշտոնական, պարբերաբար և հետևողական կայացումը և իրականացման ընթացքը: Այդ պահանջը բխում է որակի վերանայման արդյունքներով հայտնաբերված տվյալներին արդյունավետ կերպով արձագանքելու երաշխիքներ ձևավորելու անհրաժեշտությունից: Հիմնական պահանջներից մեկը որակի պահպանման և բարելավման գործողությունների պարբերաբար փաստաթղթավորումն է: Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի որակի ապահովման այնպիսի ասպեկտների վրա, որոնք հեշտ չեն ենթարկվում քանակապես արտահայտելի մշտադիտարկման: ՄՈՒՀ-ը պետք է որդեգրի համապատասխան քաղաքականություն և ռազմավարություն՝ երաշխավորելու համար, որ այդ ասպեկտները որակի ապահովման ընթացակարգերով չեն շրջանցվել:

2.3. Իրականացման գործընթացներ

ՉԱՓԱՆԻՇ: Որակի արտաքին ապահովման ընթացակարգերը պետք է լինեն հուսալի, օգտակար, նախորոշված, միատեսակ, հրապարակված և ներառեն.

- ինքնագնահատման վերաբերյալ հաշվետվություն կամ նրա համարժեքը,
- արտաքին գնահատական՝ տրված արտաքին փորձագետների կողմից,
- հաշվետվություն ըստ արտաքին գնահատման արդյունքի,
- որակի ապահովման հետագա միատեսակ ընթացակարգեր:

Որակի արտաքին ապահովման ընթացակարգերը, որոնք կատարվել են արհեստավարժ, հետևողական և թափանցիկ, կապահովեն նրանց ընդունումը և արդյունավետությունը: Որակի արտաքին ապահովման համակարգի կառուցվածքից կախված՝ ուսումնական հաստատությունը հիմք է նախապատրաստում որակի արտաքին ապահովման համար ինքնագնահատման վերաբերյալ հաշվետվությամբ կամ այլ նյութերի ներկայացմամբ՝ ներառյալ հաստատող փաստաթղթերը: Գրավոր հաշվետվությունը լրացվում է շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցով այցի ժամանակ: Գնահատման արդյունքներն ընդհանրացվում են արտաքին փորձագետների կողմից կազմված հաշվետվություններում (Չափանիշներ 2.4; 2.5): Որակի արտաքին ապահովման ընթացակարգերը չեն ավարտվում փորձագետների հաշվետվությամբ, որը հաստատության համար ներկայացնում է որակի ապահովման ինստիտուցիոնալ միջոցառումների իրականացման ձեռնարկ: Հետագա

գործողությունների բնույթը կախված է որակի արտաքին ապահովման ընթացակարգերի բնույթից: Փորձագետները պետք է ունենան հետագա համապատասխան ընթացակարգեր ուսումնական հաստատության կողմից ձեռնարկված գործողությունների ուսումնասիրման համար:

2.4. Փորձագետներ արտաքին գնահատման անցկացման համար

ՉԱՓԱՆԻՇ: Որակի արտաքին ապահովման ընթացակարգը իրականացվում է արտաքին փորձագետների խմբի կողմից՝ ներառյալ ուսանողները, որպես խմբի անդամներ

Որակի ապահովման քաղաքականությունը իրականացվում է արտաքին փորձագետների ներգրավմամբ, նրանց ընտրության և մասնակցության գործընթացներում ապահովելով էթիկական նորմերի պահպանումը: Փորձագետները պարտավոր են նախապես հայտնել անձնական, մասնագիտական, ակադեմիական կամ գործնական շահերի առկայության մասին, որոնք կարող են հակասել իրենց փորձագիտական պարտականությունների կատարմանը: Փորձագետների անկախությունն ու գործընթացի թափանցիկությունը որոշիչ գործոններ են հաջողության հասնելու համար:

Որակի արտաքին ապահովումը խարսխված է փորձագետների խմբի լայն դիապազոնի գիտելիքների և փորձի վրա, որոնք ներդրում են ունենում գործակալության աշխատանքներում՝ ներկայացնելով ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների և գործատուների տեսակետները: Փորձագետների ուսուցման և աշխատանքի որակի ապահովման նպատակով կատարվում է նրանց օբյեկտիվ ընտրություն, հաշվի առնելով կոմպետենցիաները և հմտությունները դրված խնդիրների կատարման համար: Փորձագետներն անցնում են համապատասխան ուսուցում:

Գործակալությունն ապահովում է փորձագետների անկախությունը կոնֆլիկտների կանխարգելման մեխանիզմների կիրառմամբ:

Որակի արտաքին ապահովման գործընթացում միջազգային փորձագետների ընդգրկումը՝ որպես թիմի անդամներ, ցանկալի է, քանի որ դա կնպաստի գնահատման գործընթացի հետագա կատարելագործմանը և իրականացմանը:

2.5. Որոշումների ընդունման չափորոշիչներ

ՉԱՓԱՆԻՇ: Որակի արտաքին գնահատման արդյունքում ընդունվող բոլոր որոշումները և եզրակացությունները պետք է հիմնված լինեն հստակ և հրապարակված չափորոշիչների վրա, որոնք կիրառվում են միատեսակ, անկախ նրանից, ընդունվում է պաշտոնական որոշում, թե՝ ոչ:

Որակի արտաքին ապահովման ընթացակարգը, հատկապես, պաշտոնական որոշումների ընդունման մասով, նշանակալից ազդեցություն է թողնում ուսումնական հաստատության գործունեության և գնահատման օբյեկտներ հանդիսացող ծրագրերի իրականացման վրա: Որակի արտաքին ապահովման ընթացակարգերով որոշումների ընդունումը (արդյունքների օբյեկտիվության և հուսալիության նկատառումներով) պետք

է հիմնվի որոշակի և հրապարակված չափորոշիչների վրա, որոնք հիմնված են փաստացի տվյալների վրա և մեկնաբանվում են միատեսակ: Որակի արտաքին ապահովման ընթացակարգերից կախված գնահատման արդյունքները կարող են ընդունել տարբեր ձևեր, օրինակ, երաշխավորություններ, ցանկություններ կամ պաշտոնական որոշումներ:

2.6. Հաշվետվություն

ՉԱՓԱՆԻՇ: Փորձագետների հաշվետվությունները պետք է հրապարակվեն լրիվ և ակադեմիական հասարակության, արտաքին գործընկերների ու շահագրգիռ այլ կողմերի համար պարզ, մատչելի ձևով: Եթե գործակալությունը պաշտոնական որոշում է ընդունում, ապա այն պետք է հրապարակվի հաշվետվության հետ միասին:

Փորձագետների հաշվետվությունը հիմք է հանդիսանում ուսումնական հաստատության հետագա գործողությունների համար և տեղեկատվություն է տրամադրում հանրությանը ուսումնական հաստատության գործունեության մասին: Որպեսզի հաշվետվությունը՝ որպես հիմք, օգտագործվի գործողությունների պլանավորման համար, պետք է ունենա հստակ կառուցվածք, գրված լինի պարզ լեզվով և պարունակի.

- իրավիճակի նկարագրություն,
- փորձագետների անհատական ընթացակարգերի նկարագրություն,
- ապացույցներ, վերլուծություն և բացահայտված արդյունքներ,
- եզրակացություն,
- ուսումնական հաստատությունում կիրառվող պրակտիկայի օրինակներ,
- երաշխավորություններ հետագա գործունեության համար:

Ուսումնական հաստատությանը հնարավորություն է ընձեռնվ՝ արտաքին գնահատման վերաբերյալ հաշվետվության մեջ շտկումներ անելու մինչև նրա ավարտը: Համառոտ հաշվետվությունը նույնպես կարող է օգտակար լինել:

2.7. Բողոքներ և բողոքարկումներ

ՉԱՓԱՆԻՇ: Բողոքների և բողոքարկումների ընթացակարգերը պետք է հստակ որոշված լինեն՝ որպես որակի արտաքին ապահովման ընթացակարգերի վարման կարգի մաս և իրազեկված ուսումնական հաստատությանը:

Ուսումնական հաստատության իրավունքների պաշտպանության և որոշումների ընդունման արդարամիտ գործընթացի ապահովման հնպատակով որակի արտաքին ապահովման ընթացակարգը պետք է իրականացվի բաց և հաշվետու: Այնուամենայնիվ, կարող են ծագել որոշ տարաձայնություններ կամ դժգոհություններ գործընթացից կամ պաշտոնական արդյունքներից: Ուսումնական հաստատությունը պետք է մուտքի հնարավորություն ունենա ընթացակարգեր, որը թույլ կտա վիճելի հարցերը գործակալության հետ լուծել ուղղակիորեն: Գործակալություններն իրենց հերթին, այդպիսի հարցերը պետք է դիտարկեն մասնագիտորեն հստակ որոշված և միատեսակ

ընթացակարգերով բոլորի համար: Բողոքների դիտարկման ընթացակարգը թույլ է տալիս ուսումնական հաստատությանը՝ արտահայտելու իր դժգոհությունը որակի արտաքին գնահատման գործնթացի կամ այն իրականացնող անձնակազմի գործողությունների վերաբերյալ: Բողոքարկման ժամանակ ուսումնական հաստատությունը հարց է բարձրացնում ընթացակարգերի պաշտոնական արդյունքների մասին և կարող է ցուցադրել փաստեր, որ արդյունքները հմնված են ոչ ստույգ ապացույցների վրա, իսկ չափանիշները կիրառվել են ոչ կոռեկտ կամ գործընթացը իրականացվել է անհամապատասխան ձևով:

3.ՀՀ ՈԱԱԿ –ի կողմից սահմանված չափանիշներ և չափորոշիչներ

Որակի գնահատման ՀՀ Որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) կողմից մշակված և ներդրված չափանիշներն ու շեմային պահանջները նախատեսված են ուսումնական հաստատությունների կողմից հաստատության գործունեության և մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման ընթացքի ինքնավերլուծություն կատարելու և բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու համար:

ՈԱԱԿ-ի կենտրոնի մշակած մասնագիտական կրթության որակի ազգային շրջանակը (ՈԱՇ) միջոց է, որը թույլ է տալիս ուսումնառության միջավայրի պարբերաբար վերլուծություններ կատարել՝ կրթական գործընթացների որակի տեսանկյունից դիտարկելով ներկա վիճակը և բարելավմանն ուղղված գործողությունները, խոչընդոտները, ինչպես նաև հետագա զարգացմանը միտված նախաձեռնություններն ու մտադրությունները:

ՈԱՇ-ը թույլ է տալիս հաստատության գործունեության ինչպես յուրաքանչյուր տիրույթն ամբողջապես գնահատելու, այնպես էլ դրանք ավելի խորը և մանրազնին ուսումնասիրելու: Որակի ազգային շրջանակը՝ նկատի ունենալով կրթական ծառայությունների բազմաթիվ բաղադրիչները, առանձնացրել է որակի գնահատման և ճանաչման յոթ տիրույթ և հիմք է հանդիսանում որակի արտաքին ապահովման գործընթացների համար:

Յոթ տիրույթներից յուրաքանչյուրի համար Որակի Կենտրոնը սահմանել է չափանիշներ և չափորոշիչներ, որոնք կրթական հաստատությունների կողմից պետք է ընկալվեն որպես որակի ապահովման անհրաժեշտ ուղենիշներ: Տիրույթներից յուրաքանչյուրի համար դրանք ձևակերպված են որպես բազմաձևության և նորարարության որոշակի ազատություն ապահովող տարածական սահմանումներ, հատուկ առանձնացված ձևակերպումներ, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը՝ ելնելով տարբեր հաստատությունների բնույթի, որդեգրած կրթական հայեցակարգերի և նպատակների միջև առկա էական տարբերություններից: Այդուհանդերձ, չափանիշները սահմանված են բավարար հստակությամբ՝ հավաստիանալու համար, որ ձևակերպումներում առկա են ընդունելի որակի կարևոր ասպեկտները:

Իսկ յուրաքանչյուր չափանիշին համապատասխանության չափը և անաչառ գնահատման համար անհրաժեշտ պայմանները սահմանված են չափորոշիչային ձևակերպումներով : Որակի կենտրոնի սահմանած չափանիշները, չափորոշիչներն ու կատարողականի ցուցիչները պարբերաբար վերանայվում են՝ երաշխավորելու համար դրանց վավերականությունը, արդիականությունը և համապատասխանությունը միջազգային հավատարմագրման և որակի ապահովման ոլորտում առկա վերջին միտումներին ու զարգացումներին: Հավատարմագրված կարգավիճակի ստացման համար հաստատությունները փորձաքննության են ենթարկվում և գնահատվում սահմանված չափանիշներով ու չափորոշիչներով.

•**Ինստիտուցիոնալ կարողություն:** Ինստիտուցիոնալ կարողությունը նկարագրում է ուսանողներին կայուն և բարձրորակ ծառայություններ մատուցելու բաղադրիչները, որի զարգացման և բարելավման համար անհրաժեշտ է սահմանված ձևով իրականացնել ինքնավերլուծություն և ստացված արդյունքների հիման վրա մշակել համապատասխան բարելավման ծրագիր և պլան:

•**Կրթական ծրագրեր:** Կրթական ծրագրերի ճկունությունը, համապատասխանությունն արդի շուկայական պահանջներին բարենպաստ նախապայմաններ են ստեղծում հարափոփոխ միջավայրում գործելու ունակ մասնագետներ պատրաստելու համար: Իսկ կրթական ծրագրերի նախագծման, մշտադիտարկման, հաստատման և գնահատման գործում ձեռնարկված հստակ քայլերը կարևոր նշանակություն ունեն կրթական որակյալ պայմանների ձևավորման համար:

•**Գիտելիքի կառավարում:** Գիտելիքի կառավարումն ուղղված է գիտելիքի ձևավորման գործընթացի արդյունավետությանն ու հուսալիությանը, ինչպես նաև զարգացմանը և կիրառելիության ապահովմանը: Այն ընդգրկում է հաստատության կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքները և դրանց կապակցումը ուսումնական ծրագրերի հետ: Գիտելիքի կառավարման համակարգում կարևորվում է գնահատման գործընթացը, որից կախված է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռք բերման արդյունավետությունը:

Կրթության զանգվածային բնույթը ենթադրում է, որ շրջանավարտները պետք է կարողանան գործունեություն ծավալել հարափոփոխ միջավայրում և ունենան փոխանցելի հմտություններ ու կարողություններ, որը հնարավոր է, երբ ուսանողներն ու դասախոսներն աշխատում են համակողմանի և ներդաշնակ համագործակցային մթնոլորտում և ուսանողներն ուսումնառության ընթացքում օժտված են ինքնութույնությամբ ու ճկունությամբ: Արդյունքում նրանց մոտ ձևավորվում են ինքնուրույն գիտելիք ձեռք բերելու հմտություններ և կարողություններ, ինչն էլ օգնում է նրանց՝ սովորելու ողջ կյանքի ընթացքում: Վերոհիշյալի կիրառման պայմաններում փոխվում է նաև դասախոսի դերակատարությունը. Նրա գլխավոր նպատակն է դառնում ուսանողների կրթական գործունեության ուղղորդման, գիտելիքի յուրացման և կոմպետենցիաների ձեռքբերման գործընթացի կառավարումը:

•**Ուսանողակենտրոն մոտեցում:** Կրթության զանգվածային բնույթը ենթադրում է, որ շրջանավարտները պետք է կարողանան գործունեություն ծավալել հարափոփոխ միջավայրում և ունենան փոխանցելի հմտություններ: Այդպիսի ուղղվածության

արդյունքներն առավել արդյունավետ են, երբ ուսանողներն ու դասախոսներն աշխատում են ներդաշնակորեն՝ համագործակցային մթնոլորտում, ուսանողներն ուսումնառության ընթացքում օժտված են ինքնուրույնությամբ ու ճկունությամբ: Արդյունքում ուսանողների մոտ ձևավորվում են գիտելիք ձեռք բերելու հմտություններ, ինչն էլ օգնում է նրանց սովորելու ողջ կյանքի ընթացքում: Այդօրինակ մոտեցման պարագայում փոխվում է նաև դասախոսի դերակատարությունը. նրա գլխավոր նպատակն է դառնում ուսանողների կրթական գործողություններն ուղղորդելու, գիտելիքի յուրացման և կոմպետենցիաների ձեռքբերման գործընթացը կառավարելու գործառույթի իրականացումը:

•**Տեղեկատվության կառավարում:** Տեղեկատվության ճիշտ կառավարումը վերաբերում է տարբեր մակարդակներում (ներբուհական, ազգային և միջազգային) կատարվող փոփոխությունների վերաբերյալ հիմնավորված և նորացվող տեղեկությունների հավաքագրմանը, վերլուծությանն ու տարածմանը: Գործընթացի արդյունավետության համար կարևոր նշանակություն ունի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը:

•**Ֆինանսավորում:** Ֆինանսավորման մեխանիզմները կարևոր նշանակություն ունեն որակյալ կրթության ապահովման գործում՝ անհատների ու հասարակության համար մատչելի կրթություն ապահովելու համար համապատասխան ռեսուրսներ ձևավորելով, ինչպես նաև հեռանկարներ ստեղծելով ինստիտուցիոնալ զարգացման համար:

•**Որակի մշակույթ:** Որակը էապես կախված է կրթական հաստատություններում ձևավորված մշակույթից, որը ենթադրում է ստեղծագործական, վերլուծական գործունեություն, թափանցիկություն, ինքնագնահատում և շարունակական բարելավում: Ուստի, Որակի Ազգային Կենտրոնը կարևորում է որակի ներքին ապահովման կայուն մեխանիզմներ կիրառող որակի մշակույթի դերը, ինչպես նաև ուսուցման որակը:

Ինստիտուցիոնալ փորձաքննություն

Ինստիտուցիոնալ/ծրագրային ինքնագնահատումը փորձագիտական գնահատման փուլ անցնելու մեկնակետն է: Ուստի Ինստիտուցիոնալ և ծրագրային կառավարման սահուն ընթացքը ապահովելու համար (որը կնպաստի կրթական գործընթացների որակի բարելավմանը և կառավարման արդյունավետությանը), ՀՀ ՈԱԱԿ-ը որդեգրել է որակի ընդհանուր կառավարման (TQM) մոտեցումը՝ որպես ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնագնահատման գլխավոր սկզբունք և ԲՈՒՀ-երին առաջարկում է հետադարձ կապի վրա հիմնված կառավարման գնահատման հետևյալ մոդելը՝ ներդրումներ, գործընթացներ, արդյունքներ, բարելավում: Ընդ որում, որակի ընդհանուր կառավարումը պետք է կիրառվի վերը նշված յուրաքանչյուր փուլում: Կատարողական ցուցիչները սովորաբար վերցվում են բոլոր փուլերից՝ Պլանավորում՝ խնդիրների սահմանում և դրանց լուծման չափման միջոցների ձևակերպում, Իրականացում՝ միջոցառումների իրականացում, Ստուգում և Վերանայում՝ իրականացման ընթացիկ և շրջափուլային գնահատում, որը որոշում է՝արդյո՞ք

արձանագրված արդյունքները համահունչ են պլանավորված խնդիրներին, Բարելավում՝ պլանների ամփոփում և/կամ վերաշտկում՝ նկատի ունենալով շահակիցների արձագանքը և ընդհանուր գնահատման արդյունքները: Անհրաժեշտության դեպքում նոր խնդիրներ կարող են դրվել:

1. Առաքելություն և նպատակներ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը և նպատակներին, որոնք համահունչ են ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակավորումների ազգային շրջանակին համահունչ և հստակ ձևակերպված առաքելություն, որում արտացոլված են հաստատության սահմանած նպատակները և խնդիրները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի առաքելությունն արտացոլում է ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Հաստատության ներքին շահակիցներն ընդունում և նպաստում են ՄՈՒՀ-ի առաքելության իրականացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ն ունի առաքելության ու նպատակների իրականացման նվաճումները գնահատելու պաշտոնապես սահմանված մեխանիզմներ և ընթացակարգեր:

2. Կառավարում և վարչարարություն

ՉԱՓԱՆԻՇ: Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու էթիկայի նորմերին համապատասխան կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը և վարչական կառույցները, դրանց գործառնումը արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել՝ իրենց վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցություն ունեցող որոշումներ կայացնելու գործընթացներում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը, համապատասխան իր առաքելությանն ու նպատակներին, իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և դրա արդյունքներն օգտագործում իր գործունեության արդյունավետությունը բարելավելու նպատակով:

3.Որակի ներքին ապահովման համակարգ

Որակի ներքին ապահովումը Հայաստանի մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովման հիմնական տարրերից է:

ՀՀ ՈԱԱԿ-ը տրամադրում է որակի ապահովման քաղաքականության շրջանակ, որն ուղղորդում է ԲՈՒՀ-ի որակի ներքին համակարգի ստեղծումն ու գործարկումը:

Որակի ներքին ապահովման քաղաքականությունը արտացոլում է համալսարանի զարգացման ռազմավարությունը և գործունեությունը : Որակի ներքին ապահովման քաղաքականությունը սահմանում է որակի պարզ և չափելի խնդիրներ հաստատության տարբեր գործառույթների և մակարդակների համար:

Գործընթացները, որոնք իրականացվում են ՀՀ ՈԱԱԿ-ի չափանիշներին, ընթացակարգերին և ոլորտի քաղաքականությանը համապատասխան կանոնակարգերով ու ընթացակարգերով, առաքելության, նպատակների, արժեքների և տարբեր ծրագրերի, ձեռքբերումների ու վերանայման, վերլուծության և զարգացման հնարավորություն են տալիս:

Մասնագիտական կրթության որակի ապահովման, բարելավման ու պահպանման գործընթացները ՈԱԱԿ-ի որակի ապահովման գործընթացները թույլ են տալիս պարբերաբար գնահատել համալսարանի գործունեությունը և մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման ընթացքը:

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ներքին ապահովման ենթակառուցվածք, որն ապահովում է որակի ընդհանուր կառավարումը՝ համապատասխան «Որակի ապահովման Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների» (ՈԱԵՉՈՒ/ESG):

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ը տրամադրում է ժամանակ,նյութական, մարդկային և ֆինանսական բավարար ռեսուրսներ որակի ներքին ապահովման գործընթացները կառավարելու նպատակով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի և դրանց համաձայն շնորհվող որակավորումների որակի ու չափորոշիչների ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր: Յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագրի ռազմավարությունը և նպատակները պաշտոնապես հաստատված են և հանրությանը հասանելի: Որակի ապահովման գործընթացներում կարևորվում է ուսանողների և այլ շահակիցների դերը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ունի իր կրթական ծրագրերի մշակման, հաստատման, պարբերաբար վերանայման և մշտադիտարկման գործընթացների գնահատման պաշտոնապես հաստատված մեխանիզմներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման արդյունավետությունը չափող մեխանիզմներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների արդյունավետությունը գնահատելու մեխանիզմներ: Այդ մեխանիզմները հասանելի են արտաքին գնահատում իրականացնողներին, որոնց զեկույցներում կա անդրադարձ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասախոսներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. Մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետ իրագործման նպատակով ՄՈՒՀ-ում գործում են տեղեկատվության հավաքումը, վերլուծումը և կիրառումը գնահատող
մեխանիզմներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ը. ՄՈՒՀ-ում գործում են մեխանիզմներ, որոնք գնահատում են բոլոր հրապարակումները՝ երաշխավորելով, որ դրանք թարմացված են, անկողմնակալ և օբյեկտիվ քանակական և որակական տեղեկատվություն են պարունակում, ինչպես նաև ընդգրկում են հաստատության կրթական ծրագրերն ու դրանց սահմաններում շնորհվող որակավորումները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ թ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

4.Արտաքին կապեր և միջազգայնացում

ՉԱՓԱՆԻՇ : Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով միջազգայնացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ը գործող քաղաքականության և ընթացակարգերի միջոցով խրախուսում է արտաքին կապերի հաստատումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ենթակառուցվածքը երաշխավորում է բնականոն գործընթաց:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների հետ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելունպատակով ապահովում է հաստատությունում օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակը:

5. Ուսանողներ

ՉԱՓԱՆԻՇ : Կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է խորհրդատվական և աջակցության

ծառայություններ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրման և ընդունելության հստակ մեխանիզմներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Ուսանողների ուսումնառությանը նպաստելու համար ՄՈՒՀ-ը լրացուցիչ պարապմունքների կազմակերպման հնարավորություններ է ստեղծում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Հավելյալ օժանդակություն և ուղղորդում ստանալու համար ուսանողներին՝ վարչական աշխատակազմին դիմելու հատուկ ժամեր են նշանակված:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Ուսանողների կարիերայի աճին նպաստող հատուկ ծառայությունների միջոցով ՄՈՒՀ-ը նրանց նախապատրաստում է ապագա աշխատանքի:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. ՄՈՒՀ-ում գործում են հաստատության կառավարման գործընթացում ուսանողների ակտիվ ներգրավվածությանը նպաստող քաղաքականություն և ընթացակարգեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Ուսանողները ակտիվորեն ներգրավվում են հաստատության համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. Ուսանողները ներգրավված են հաստատության գործունեության գնահատման գործընթացներում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ը. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ թ. Ուսանողները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

6. Դասախոսական և օժանդակ կազմ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներն իրականացնելու համար ՄՈՒՀ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակներ ունեցող դասախոսական և օժանդակ կազմով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար մասնագիտական անհրաժեշտ որակներ ունեցող դասախո-սական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը նպաստում է դասախոսների մասնագիտական զարգացմանը՝ համաձայն պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքների:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. Հիմնական դասախոսական կազմը ապահովում է մասնագիտությունների կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող անհրաժեշտ որակավորումների ծավալը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը մշակել է դասախոսական կազմի, մասնավորապես՝ երիտասարդ դասախոսների խարախուսման քաղաքականություն և ընթացակարգեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ն ունի իր ռազմավարական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ վարչական և օժանդակ աշխատակազմ:

1. Մասնագիտության կրթական ծրագրեր

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտությունների կրթական ծրագրերը համապատասխանում են Հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս, համապատասխանում են ազգային պահանջներին, ուսանողների և այլ շահակիցների կարիքներին և բովանդակային առումով համոզիչ են:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Կրթական ծրագրերը մանրամասն ձևակերպված են՝ ըստ շնորհվող որակավորումների համապատասխան ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Մասնագիտության կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Մասնագիտության կրթական ծրագրերը մշտադիտակվում են, իսկ դրանց արդյունավետությունը պարբերաբար գնահատվում է:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Նպաստելով ակադեմիական ազնվությանը՝ մասնագիտությունների կրթական ծրագրերն ապահովում են ուսանողների՝ ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան գնահատում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. Մասնագիտության կրթական ծրագրերը բովանդկային առումով հուսալի են, հստակ մշակված և համահունչ են նմանատիպ այլ կրթական ծրարգրերի հետ և նպաստում են ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը:

8. Հետազոտություն և զարգացում

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ը նպաստում է հետազոտական նպատակների,նախագծերի իրականացմանը և ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը: Առկա է հետազոտական ավանդույթ և մշակույթ, ինչպես նաև հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ը հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ն ունի հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու հստակ մեխանիզմներ:

9. Ենթակառուցվածք և ռեսուրսներ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի սեփականություն և անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի առաջարկվող մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխան ուսումնական միջավայր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ը ձգտում է ապահովել և ճիշտ բաշխել բավարար ֆինանսական ռեսուրսներն իր առաքելությանն ու նպատակներին հասնելու համար անհրաժեշտ միջոցները և սարքավորումներն ապահովելու, կիրառելու և գործարկելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ունի ֆինանսական ռեսուրսների բաշխման ճիշտ քաղաքականություն՝ հաստատությունում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակայնությունն ու անխախտ ընթացքը երաշխավորելու և ապահովելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան օժանդակում է մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը կատարվում է որակի ընդհանուր կառավարման սկզբունքով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ը առողջապահական և անվտանգությանն պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր՝ հաշվի առնելով հատուկ կարիք ունեցող ուսանողներին:

10. Հասարակական պատասխանատվություն

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ը հաշվետու է կառավարությանը, գործատուներին և հասարակությանը, որ իր տրամադրած կրթությունը և օգտագործած ռեսուրսները Համապատասխանում են իրենց նպատակներին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Հետադարձ կապի կայուն մեխանիզմների միջոցով ձևավորվել են ամուր կապեր հասարակության հետ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի մեխանիզմներ, որոնք ապահովում են գիտելիքի փոխանցումը հասարակությանը:

Կրթական ծրագրեր/ծրագրային հավատարմագրում/

1.Մասնագիտության կրթական ծրագրի մշակում և հաստատում.

Մասնագիտական կրթական ծրագրերը (ՄԿԾ) մշակվում և հաստատվում են բուհի առաքելությանը և նպատակներին համապատասխան՝ կրթական ծրագրերի կազմման համալսարանում մշակված ռազմավարությամբ և հաստատման կարգով, համալսարանի կողմից կիրառվող չափանիշներով և չափորոշիչներով՝ ընդգրկելով ուսուցման բոլոր էտապներն ու վերջնարդյունքները: Ծրագրերի յուրացման արդյունքում շնորհվող որակավորումները հստակ սահմանված են և համապատասխանում են որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ):

Որակի ապահովման չափանիշները համապատասխանում են որակի ապահովման նպատակին և պարզ ու հասանելի են հանրությանը:

ՈԱԿ-ի ծառայությունները վավեր են, հուսալի և գործնական, իսկ որոշումները կայացվում են ըստ սահմանված չափանիշների և չափորոշիչների:

Կրթական ծառայությունները հասկանալի են ներքին և արտաքին շահակիցներին, կազմակերպված պատշաճ, ֆինանսապես արդյունավետ, թափանցիկ և հաշվետու հանրությանը:

Մասնագիտական կրթական ծրագրի որակը կախված է ոչ միայն գործընթացի համարժեքությունից, այլև նրանից, թե ինչպես են այդ գործընթացները վերահսկվում ձեռք բերված արդյունքների տեսանկյունից: Կրթական ծրագրերը ենթակա են ներքին և արտաքին փորձաքննության՝ համաձայն սահմանված չափանիշների և չափորոշիչների, նախօրոք որոշված պարբերականությամբ:

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտության կրթական ծրագիրը (ԿԾ) համապատասխանում է մասնագիտական ուսումնական հաստատության (ՄՈՒՀ) առաքելությանը, հանդիսանում է ՄՈՒՀ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս, համապատասխանում է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին և ուսանողների ու այլ շահակիցների կարիքներին, բովանդակային առումով հուսալի է:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Մասնագիտության կրթական ծրագրի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Կրթական ծրագրերը մանրամասն ձևակերպված են՝ ըստ շնորհվող որակավորումներին համապատասխան ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Մասնագիտության կրթական ծրագիրը բովանդակային առումով հուսալի է, հստակ մշակված և համահունչ նմանատիպ այլ կրթական ծրագրերի հետ և նպաստում է ուսանողների ու դասախոսական կազմի շարժունությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. ԿԾ համապատասխանում է մասնագիտական կրթության բնութագրիչներին և բավարարում է կարիքները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Կրթական ծրագիրն ապահովված է իր բովանդակությունը բավարարող ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով:

2. Դասախոսական կազմ

Դասախոսը հանդիսանում է ուսուցման, դասավանդման, ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռք բերման կարևորագույն օբյեկտ, որը պարտավոր է գործընթացում անհրաժեշտ հմտությունները, փորձը և գիտելիքներն արդյունավետորեն փոխանցել ուսանողներին, ինչպես նաև ապահովել հետադարձ կապ նրանց ուսուցման որակի շարունակական բարձրացման համար:

Համալսարանը պատասխանատվություն է կրում իր աշխատակիցների մասնագիտական աճի, օպտիմալ պայմանների ապահովման և արդյունավետ աշխատանքի համար: Պարբերաբար կազմակերպվում են թեմատիկ, մասնագիտական դասընթացներ, վերապատրաստումներ:

Դասավանդող կազմը պետք է կարողանա ինքնագնահատել սեփական մասնագիտական կարողությունները, մասնագիտական ու մանկավարժական մեթոդական հմտությունները և բարելավել, կատարելագործել և զարգացնել այն: Համալսարանը ներդրել է մեխանիզմներ և չափանիշներ դասավանդողների կոմպետենտության գնահատման համար, որոնք արտացոլվում են նրանց հաշվետվություններում և հասանելի են գործընթացը իրականացնող կազմակերպություններին,:

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական կրթական ծրագրի նպատակներն իրականացնելու համար ՄՈՒՀ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակներ ունեցող դասախոսական կազմով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար մասնագիտական անհրաժեշտ որակներ ունեցող դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր:

Գիտելիքների գնահատումը իրականացվում է կրթական ծրագրի նպատակներին ու ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան: Գնահատման գործընթացի օբյեկտիվությունը ապահովվում է համալսարանում սահմանված կարգի համաձայն: Հնարավորության դեպքում որոշումները կայացվում են մեկից ավելի քննողների կարծիքի հիման վրա, հաշվի առնելով քննական պահանջների հնարավոր հետևանքները: Ուսանողները տեղեկացվում են գնահատման՝ քննության, ստուգարքի կամ այլ տեսակի ստուգումների ու վերահսկողության տիպերի ռազմավարությանը:

Ուսանողների գնահատման համալսարանում գործող համակարգը հիմնված է համապատասխան չափանիշների և չափորոշիչների վրա:

ՉԱՓԱՆԻՇ: Նպաստելով ակադեմիական ազնվությանը՝ մասնագիտությունների կրթական ծրագրերն ապահովում են ուսանողների՝ ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան գնահատում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ԿԾ-ում գնահատվում է սովորողի ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը՝ ըստ ուսանողի ուղեցույցում ներկայացված պահանջների:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ը հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերում ուսանողներին՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը խրախուսում է ուսանողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարում գրագողության դեմ:

6. Կրթական միջավայր

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ը նպաստում է որակյալ կրթություն իրականացնելուն՝ ուսումնառության համար բարենպաստ միջավայր ձևավորելով

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ԿԾ-ն ունի սեփականություն և անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ԿԾ-ի սահմաններում ուսանողներին ամանակին և պարբերաբար տրամադրվում են ուսումնառությանը նպաստող օգտակար ու մատչելի տեղեկություն և խորհրդատվություն:

7. Որակի ապահովում

ՉԱՓԱՆԻՇ: Կրթական ծրագիրն ունի որակի ներքին համակարգ, որը նպաստում է իր պահպանումը և շարունակական զարգացումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ը մշտապես թարմացնում և կատարելագործում է ԿԾ-ը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ԿԾ-ը նախատեսում է հետադարձ կապ, որը թույլ է տալիս կրթական նպատակների տեսանկյունից գնահատել ուսանողների ձեռքբերումները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում առկա են կրթական ծրագրի որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգ(եր):

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Որակի պահովման համակարգը մշակված է և գործում է՝ հետևելու հասարակական կարիքներին ու ուսանողների պահանջներին, ինչպես նաև իրականացվող գործառույթների ստուգման համար: